Azg Ազգ

13 ԱՊՐԻԼ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 65(4684)

ISSN: 1829-1651

Վանգավորության ամենաբարձր ասիճան «Ֆուկուշիմա-1»-ին



Ճապոնիայի կառավարությունը երեկ բարձրացրել է վթարված «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի վանգավորության մակարդակը. ըստ միջազգային 7 բալանոց INES սանդղակի՝ ԱԷԿ-ի վիճակն այժմ գնահատվում է ամենաբարձր ասիճանով: Այդ մասին հաղորդում է Կիոդո լրատվական գործակալությունը: Մինչեւ վերջերս վանգավորության 7-րդ ասիճան տրվել էր միայն Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարին: Ֆուկուշիմայի դրեֆեկտուրայի որոշ շրջաններում ճառագայթման մակարդակը գերազանցում է թույլատրելի տարեկան չափերը, հաղորդում է NHK հեռուստաալիքը, վկայակոչելով կառավարության տվյալները:

Փորձագետների կարծիքով, «Ֆուկուշիմա-1»-ի վթարը հետեւանքներով կարող է գերազանցել Չեռնոբիլի աղետին:

Յոթերորդ ասիճանը նշանակում է մի քանի տասնյակ հազար տերաբեկերել ռադիոակտիվ նյութի արտանետում, ինչը կարող է ծանր հետեւանքներ ունենալ բնակչության առողջության եւ շրջակա միջավայրի համար:

Ատոմակայանի օպերատոր TEPCO ընկերությունը հաղորդում է, որ երեկ առավոտյան 4-րդ ռեակտորում հրդեհ է բռնկել: Ռոյթեր գործակալության տվյալներով, հրդեհը հաջողվել է մարել:

Երեկ Տոկիոյից արեւելք գտնվող Տիբայի դրեֆեկտուրայում տեղի է ունեցել 6,3 մագնիտուդով երկրաշարժ: Ցնցումները զգացվել են նաեւ մայրաքաղաք Տոկիոյում: Տուժածների վերաբերյալ տեղեկություններ չկան: Նախօրեին Հոնսյու կղզու հյուսիս-արեւելքում արձանագրվել էր 7,1 մագնիտուդով երկրաշարժ, որի հետեւանքով ընդհատվել էին էլեկտրամատակարարումը եւ գնացքների երթեւեկությունը:

Մինսկի խմբի համանախագահներին ընդունել են հայկական երկու պետությունների նախագահները

Մինչ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումը՝ ապրիլի 11-ին Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին, Ռոբերտ Բրադտկեին եւ Բեռնար Ֆասիեին ընդունել է ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Նախարարը համանախագահների ուշադրությունն է հրավիրել «անցյալ տարի Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներ իրականացված համանախագահների դաշտային գնահատման առաքելության զեկույցի Ադրբեջանի կողմից աղավաղման եւ այդ փաստաթուղթը իր ռազմատենչ հռետորաբանությունն արդարացնելուն ծառայեցնելու փորձերի վրա»: «Ադրբեջանի կողմից զեկույցի առնչությամբ արվող մեկնաբանությունները հակասում են համանախագահների ներկայացրած գնահատականներին, դրանով իսկ ոչ միայն սպվեր գցելով նրանց ջանքերի, այլեւ բացասաբար ազդելով բանակցային գործընթացի վրա», նկատել է Նալբանդյանը: Հիշեցնենք՝ մարտի 29-ի համարում «**Ազգը**» ներկայացրեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների դաշտային առաքելության զեկույցի՝ ադրբեջանական «ծուռ հայելիները»:

Հայաստանի նախագահի հետ հանդիպման ժամանակ, համաձայն ՀՀ նախագահի պաշտոնական կայքէջի, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն ու ԵԱՀԿ նախագահողի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկը «քննարկել են ԼՂ հիմնահարցի կարգավորման բանակցային ներկա փուլին վերաբերող հարցեր»:

Երեւանից համանախագահները մեկնել են Ստեփանակերտ, որտեղ նրանց ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Այսօր արդեն, հաստելով ղարաբաղա-ադրբեջանական շփման գիծը, Մինսկի խմբի համանախագահները կմեկնեն Ադրբեջան:

Հ. Ա.

Նախագահը մեկնում է Սլովենիա

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն այսօր պաշտոնական այցով կմեկնի Սլովենիայի Հանրապետություն: Նախագահի մամուլի գրասենյակից հայտնում են, որ հանրապետության ղեկավարը հանդիպումներ կունենա Սլովենիայի բարձրագույն ղեկավարության հետ: Նախատեսվում են մի շարք ոլորտներում հայ-սլովենական համագործակցության զարգացմանն ուղղված փաստաթղթերի ստորագրում եւ հանդիպման արդյունքների ամփոփում լրատվամիջոցների հետ հանդիպման ժամանակ:

Սա ՀՀ նախագահի պատասխան այցելությունն է Սլովենիա: Անցյալ տարվա հոկտեմբերի 11-ին այդ երկրի նախագահ Դանիլո Թյուրկը Հայաստանում էր:

Հ. Ա.

Զու արտադրողները՝ ամենօրյա հսկողության ներքո

Ս. Ձատկի տոնի հետ կապված սովորաբար Հայաստանում ավելանում է հավի ձվի պահանջարկը, եւ «որպեսզի տնտեսվարողները, առիթից օգտվելով, թույլ չտան չարաշահումներ, տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը ապրիլի 12-ի նիստում որոշել է նրանց գործունեության նկատմամբ ամենօրյա հսկողություն սահմանել»: Այս մասին տեղեկացավ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ մեզ տրամադրած հաղորդագրությունից: Մասնավորապես, այս շուկայում գործող արտադրողներից օրական կտրվածքով կպահանջվի տեղեկատվություն՝ արտադրության, իրացման ծավալների, մնացորդի, ինչպես նաեւ բացթողնման գների վերաբերյալ: Գների փոփոխության դեպքում տնտեսվարողները պետք է ներկայացնեն նաեւ համապատասխան հիմնավորումներ: Հանձնաժողովը տեղեկատվություն կպահանջի նաեւ առավել խոշոր սուպերմարկետներից՝ արտադրողների կողմից իրենց մատակարարված ձվի ծավալների վերաբերյալ:

Ա. Մ.

Հայ-ռուսական պայմանագրի փոփոխությունների արձանագրությունն ընդունվեց

Ազգային ժողովը երեկ քվեարկությամբ ընդունեց 2010թ. օգոստոսի 20-ին Երեւանում Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրված պայմանագրում փոփոխություններ կատարելու թիվ 5 արձանագրությունը: Փոփոխություններով Հայաստանում տեղակայված ռազմաբազան մեր զինված ուժերի հետ համատեղ աղահովելու է մեր երկրի անվտանգությունը, Ռուսաստանը Հայաստանին զինելու է ժամանակակից եւ համատեղելի սպառազինությամբ եւ զինտեխնիկայով, իսկ ռուսական ռազմաբազայի գործունեության ժամկետը երկարաձգվում է՝ 25 տարուց դառնալով 45:

Մ. Խ.

Թուրքերը պահանջում են Թեհրանում չցուցադրել Տիգրան Խզմալյանի՝ Հայոց ցեղասպանության մասին ֆիլմը

«Հայերի անհիմն պնդումների դեմ պայքարի միություն» անվամբ թուրքական կազմակերպությունը դիմել է Իրանի իշխանություններին՝ պահանջելով ապրիլի 24-ին Թեհրանում չցուցադրել Հայոց ցեղասպանության մասին Տիգրան Խզմալյանի «Արմին Վեգներ՝ Ցեղասպանության լուսանկարիչ» ֆիլմը: Միության նախագահ Գյոքսել Գյուլբեյն անընդունելի է համարել, որ «իսլամական երկրներից մեկը մյուսին ցեղասպան պետություն անվանի եւ թույլտվություն տա ցուցադրելու ցեղասպանության մասին պատմող ֆիլմ»: Սա, ինչպես տեսնում եք, թուրքական ուրացման՝ խոր արմատներ ձգած մտայնության դրսեւորում է, որը ոչ մի շրջանակում չի տեղավորվում:

Մ. Խ.

Կալանավորվել է ՀԿԳ քննիչ Վահան Խանզադյանը

Ըստ հատուկ քննչական ծառայության հաղորդման՝ ՀՔԾ վարույթում շարունակվում է Արամ եւ Արթուր Մարտիրոսյան եղբայրների եւ Հրաչյա Պետրոսյանի՝ ապօրինի ձեռ բերված հրազենների գործադրմամբ 2009 թվականի նոյեմբերի 5-ին Գավառում երեք անձի նկատմամբ սպանության փորձի, ինչպես նաեւ նախաքննության ընթացքում առանձին պաշտոնատար անձանց չարաշահումների առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Պաշտոնական լիազորությունների չարաշահման համար, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ, 2011 թ. ապրիլի 11-ին մեղադրանք է առաջադրվել ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վահան Խանզադյանին՝ խափանման միջոց կիրառելով երկամսյա կալանքը:

Լի Չանչունը հիացած է հայկական կոնյակով

Իսկ Տիգրան Սարգսյանը հպարտ՝ հայ-չինական «Շանսի-Նարիրհս» ընկերությամբ

Երեւանում երեկ մեկնարկեց հայ-չինական գործարար համաժողովը, որի բացմանը մասնակցեցին Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանն** ու Չինաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի քաղաքական բյուրոյի մշտական անդամ **Լի Չանչունն**:

Իր խոսքում Տիգրան Սարգսյանը, կարեւորելով Հայաստանի եւ Չինաստանի միջեւ տնտեսական հարաբերությունների հետագա խորացումը, նշեց, որ Հայաստանը շահագրգռված է Չինաստանի հետ, առանց բացառության, բոլոր ոլորտներում համագործակցության զարգացմամբ: Ըստ վարչապետի, վերջին տարիներին բացահայտել են համագործակցության մի շարք ուղղություններ՝ հանքարդյունաբերությունը, ֆիմիական արդյունաբերությունը, տուրիզմը, ենթակառուցվածքները, գյուղատնտեսությունը, բարձր տեխնոլոգիաները: «Մենք հպարտանում ենք հայ-չինական «Շանսի-Նարիրհս» ընկերությամբ, որը բացվել է անցած տարվա գարնանը՝ դառնալով համատեղ ծրագրերի իրականացման առաջամարտիկը», ընդգծեց Տիգրան Սարգսյանը:

ՉԺՀ կոմկուսի կենտրոնական կոմիտեի քաղաքական բյուրոյի մշտական անդամ Լի Չանչունը մասնավորապես ասաց. «Հայաստանն ապացուցում է, որ ունի տնտեսական մեծ ներուժ արտահանման ծավալները մեծացնելու եւ նոր ծրագրեր իրականացնելու համար: Չինաստանն ունի մեծ շուկա, Հայաստանը՝ որակյալ արտադրանք: Չնայած դրան՝ Հայաստանից մեր երկիր արտահանման ծավալները շատ փոքր են: Երեկ ես համոզվեցի անկրկնելի համ ունեցող «Արարատ» կոնյակը, որը, ցավոք, Չինաստանում չկա: Հայ գործարարներին առաջարկում եմ պարբերաբար այցելել Չինաստան, գովազդել իրենց արտադրանքը, համագործակցել չին գործընկերների հետ եւ մուտք գործել չինական շուկա»:

Գործարար համաժողովին մասնակցում են չինական 22 ընկերությունների ներկայացուցիչներ բանկային, մեքենաշինության, հեռահաղորդակցության, սարքաշինության, էներգետիկայի, հանքահումքային արդյունաբերության, զբոսաշրջության եւ այլ ոլորտներից: Ներկայումս Հայաստանում գրանցված է չինական կապիտալի մասնակցությամբ 41 ընկերություն:

Ա. Մ.

Մեր «օֆշորը»

Երեկ Ազգային ժողովը քննարկում էր «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքի նախագիծը եւ հարակից օրենքներում փոփոխությունների փաթեթը: Փաթեթի նպատակն է բարենպաստ իրավական դաշտ ստեղծել Հայաստանում ազատ տնտեսական գոտիների գործունեության իրականացման համար: Օրինագիծը կարգավորում է շահագործողին թույլտվություն տրամադրելու, կազմակերպչի ընտրության եւ այլ հարաբերություններ, սահմանում է ազատ տնտեսական գոտու կազմակերպչին եւ շահագործողին ներկայացվող պահանջները, լիազոր մարմնի լիազորությունները, շահագործման սահմանափակումները, հարկային եւ մաքսային մարմինների հարաբերությունները այդ գոտու հետ, պետության կողմից ազատ տնտեսական գոտու վերահսկումն ու ծառայությունների մատուցումը: Ազատ տնտեսական գոտիները մախային տարածքից դուրս են գործելու: Օրենքն ուժի մեջ է մտնելու հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից: Նախագծի ընդունմամբ ազատ տնտեսական գոտում աշխատելու բոլոր արտոնություններն են տրամադրվելու «Զվարթնոց» օդանավակայանին եւ «Մարս» ՓԲԸ-ին հարակից տարածքներում եւ Գյումրիում ազատ տնտեսական գոտիների ստեղծման համար, ինչի համար էլ երեկ քննարկվում էր այդ գործի համար օրենսդրական բարենպաստ հիմքի ապահովումը: Այս բոլորը ներկայացնում էր էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը**: Նրան ուղղված պատգամավորների հարցերի շրջանակն արտացոլում էր այս նախաձեռնության հանդեպ առկա մտահոգությունները:

Այս գործունեության կոռուպցիոն ռիսկերով հետաքրքրվեց ՀՅԴ-ական **Արծվիկ Մինասյանը**: Ռիսկեր կան, ըստ Տիգրան Դավթյանի, բայց պետք է ուշիշների սխալներից սովորել եւ նվազագույնի հասցնել այդ ռիսկերը: Իսկ այդ նախաձեռնության՝ երկրի զարգացման համար ճիշտ օգտագործումը կախված է նրանից, թե ինչպես կգործի այդ մեխանիզմը տարածաշրջանային զարգացումների համատեքստում: Դավթյանը սա աննախադեպ օրինագիծ անվանեց, որտեղ հատուկ տնտեսական գոտիներ են սահմանվում: Բայց մի բան է օրենսդրությամբ սահմանել, այլ բան՝ իրականացնել այնպես, որ զարգացում ապահովվի, լրացուցիչ ներդրումներ լինեն, աշխատատեղեր ստեղծվեն եւ այլն:

ԲՀԿ-ական **Վարդան Բոստանջյանը** հավան չէր «ազատ գոտու շահագործողներ» ձեւակերպմանը եւ չնայած հարակից զեկուցող էր, բայց հարակից էլ չզեկուցեց, այլ իր ելույթի ժամանակ մտահոգություններ հայտնեց, թե՝ եթե լավ նայենք, փաթեթը կարծես մեկ-երկու կազմակերպությունների համար է եւ ոչ թե ազատ տնտեսական գոտի է սահմանում: Ըստ նրա՝ պետք է այնպես անել, որ շատ տնտեսվարողներ աշխատեն դաշտում, մինչդեռ փաթեթում անորոշությունների մի գամմա է զետեղված, որի առկայությամբ անգամ համարձակություն ունեցող տնտեսվարողը գուցե չօգտվի սահմանված արտոնություններից: Տ. Դավթյանն այս մտահոգությանը պատասխանելով նկատեց, թե ընթացակարգերը մանրամասն կսահմանի դեռ կառավարությունը: Ըստ նրա՝ արտահանման ուղղվածությունը գերակա պետք է լինի ազատ տնտեսական գոտուն, նախագիծը նաեւ միջազգային փորձագիտական գնահատականի է արժանացել:

ԱԺ նախագահ **Հովիկ Աբրահամյանն** էլ համայնքներում գույքահարկի, հողի հարկի հարցերը այս նախաձեռնության մեջ հստակեցնելով էր մտահոգված:

Կարեն Ճշմարիտյանն էլ վստահեցնում էր, թե «Էմիրությունների գործող գոտիների օրենսդրությունից շատ ավելի լիբերալ է» այս փաթեթը:

ԱԺ փոխնախագահ **Սամվել Բալասանյանը** կոչամբում էր՝ պետք չէ քննադատել, զարգացնող օրենք է լինելու՝ Գյումրիում գործազրկության, արտագաղթի տոկոսն է զարգացել, ու օրենքի նախագիծը ճիշտ ժամանակին է բերված:

ՀՅԴ-ական **Արա Նռանյանը**, սակայն, համարեց, որ կառավարությունը չափորոշիչները պիտի բերեր՝ ԱԺ-ն որոշեր գոտիները, այսպիսի օրինագծերը իրավաբաններ-ի կողմից լուրջ նախնական ուսումնասիրության կարիք ունեն: Նռանյանն ասում էր՝ եթե մի քանի տնտեսվարող աշխատելու են ազատ տնտեսական գոտում, ապա կառավարության բարյացակամությունը չունեցող այլ տնտեսվարողներն, ուրեմն, սպիտված են աշխատել հարկային եւ մաքսային պրեսինգի պայմաններում:

Այսպես թե այնպես՝ այս օրենքը կընդունվի, եւ շուտով մենք Հայաստանում ականատես կլինենք տնտեսական նոր իրողության՝ ազատ տնտեսական գոտիների գործունեության:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Եվրոպական կառույցների հետ ՀՀ պետական մարմինների համագործակցությունը համակարգող հանձնաժողովի 9-րդ նիստում

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Եվրոպական կառույցների հետ ՀՀ պետական մարմինների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ **Արթուր Բաղդասարյանը** երեկ հրավիրեց միջգերատեսչական հանձնաժողովի 9-րդ նիստը, որը տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետությունում ԵՄ պատվիրակության գրասենյակում:

Ա. Բաղդասարյանը եւ **Ռ. Լուցենբերգերը** նշեցին, որ շատ բնական է միջգերատեսչական հանձնաժողովի նիստն անցկացնել ԵՄ պատվիրակության գրասենյակում, քանի որ հանձնաժողովի խնդիրներն անմիջականորեն առնչվում են ԵՄ պատվիրակության հետ: Կողմերն ընդգծեցին, որ ԵՄ-Հայաստան համագործակցությունը երբեւէ այսքան սերտ եւ արդյունավետ չէր եղել:

Ա. Բաղդասարյանը շեշտեց, որ 9-րդ նիստը կնպաստի միջգերատեսչական հանձնաժողովի եւ ԵՄ խորհրդատվական խմբի հարաբերությունների խորացմանը: Այս հանդիպումը թույլ կտա միջգերատեսչական հանձնաժողովին ԵՄ խորհրդատվական խմբի հետ համատեղ սկսելու հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանն առնչվող ծրագիրը՝ բաղկացած ամենամսյա քննարկումներից, որոնք առնչվելու են ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման խնդիրներին: Առաջին քննարկումը տեղի կունենա ապրիլի 29-ին «Մտավոր սեփականության իրավունք» թեմայով:

Երկու ժամ տեւողությամբ հանդիպման ընթացքում միջգերատեսչական հանձնաժողովի անդամ, արտաքին գործերի փոխնախարար **Կարինե Ղազինյանը** զեկուցեց ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի բանակցությունների ուղղությամբ տարված աշխատանքների մասին, իսկ միջգերատեսչական հանձնաժողովի մյուս անդամները ներկայացրին 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքները:

ԵՄ խորհրդատվական խմբի ղեկավար **Անթի Հարթիկայնեն** ներկայացրեց խորհրդատվական խմբի 3-րդ փուլի խնդիրները եւ նախատեսվող գործողությունները:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Հայ պատվիրակները ԵԽԽՎ-ում

ԵԽԽՎ գարնանային նստաշրջանում հայկական պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանն առաջարկել է, որ գալիք երկու նստաշրջանների ընթացքում Հայաստանի եւ Ադրբեջանի պատվիրակությունների եւ Լեռնային Ղարաբաղի ընտրված իշխանությունների միջեւ մորատորիում հայտարարվի՝ փոխադարձ մեղադրական հայտարարություններ չանելու առումով: Դ. Հարությունյանի առաջարկն է նաեւ շարունակել երրորդ կողմերի միջնորդությամբ Ադրբեջանի հետ երկկողմ խորհրդակցությունները, սակայն որպես երրորդ կողմ չեն կարող հանդես գալ ԵԽԽՎ նախագահը, Բյուրոյի կամ ԼՂ հարցով ենթահանձնաժողովի նորընծա ղեկավարները: Ադրբեջանական պետական քարոզչության մասին Դ. Հարությունյանն ասել է. «Ներկայումս առկա անհանդուրժողության մթնոլորտում, երբ ԵԽԽՎ-ում տարածվում է միտումնավոր սադրիչ քարոզչություն, ԼՂ հարցով ենթահանձնաժողովը բաց հրավեր է լուրջ վնաս հասցնելու բանակցային գործընթացին... Հայկական պատվիրակությունը ոչ մի պայմանով չի կարող հանձն առնել նման անպատասխանատվություն»: Իսկ ՀՅԴ-ական Արմեն Ռուստամյանն իր ելույթում ասել է, որ ստեղծված լարվածության եւ հակահայ քարոզչության պայմանները «նշանակում են, որ Հայաստանը չի կարող մասնակցել ենթահանձնաժողովի աշխատանքներին»: ԵԽԽՎ ամբիոնից ելույթ է ունեցել նաեւ պատվիրակության անդամ Նաիրա Զոհրաբյանը, որ կրոնական եւ մշակութային անհանդուրժողականության վերաբերյալ քննարկման ընթացքում, կրկին հիշեցրել է Զուղայի հայկական գերեզմանոցում Ադրբեջանի ոչնչացրած եւ համաշխարհային մշակութային արժեք հանդիսացող խաչքարերի մասին: Նա կոչ արեց ԵԽԽՎին՝ հավատարիմ իր ընդունած որոշումներին՝ դիտորդական առաքելություն ուղարկել Զուղա, քանի որ Ադրբեջանի շանտաժի պատճառով տպալվել են ԵԽԽՎ-ի, ինչպես նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՈՄՈՍ-ի ծրագրած դիտորդական առաքելությունները:

Մ. Խ.

Քննարկումներ Կոնգրեսի անդամների հետ

«Մ. Նահանգների Կոնգրեսի հայկական հարցերին աջակցող խմբակցության հովանավորությամբ «Կապիտոլ Հիլի» վրա ապրիլի 13-ին նախատեսված միջոցառումը՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա առիթով, հիանալի առիթ է, որ մենք Կոնգրեսի նոր անդամներին իրազեկենք ցեղասպանության ճանաչման եւ կանխարգելման կարեւորության մասին», նշել է Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) վարչության անդամ Անի Թոթան: ԱՀՀ-ի գործադիր տնօրեն Բրայան Արդունիի հետ տիկին Թոթան, ըստ խմբագրությանը հասցեագրված հաղորդագրության, մի շարք հանդիպումներ է ունեցել Ներկայացուցիչների պալատի փոքրամասնությունների խմբակցության ներկայացուցիչ Ստենի Հոյերի, կոնգրեսական Շելի Բերլիի եւ դեմոկրատ պատգամավոր Զոն Սարբանեսի հետ: Քննարկվել են ինչպես Հայոց ցեղասպանության ճանաչման, այնպես էլ Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին օժանդակություն ցուցաբերելու հարցեր:

Տասնվեց անգամ իր պաշտոնում ընտրված Ստենի Հոյերը անխոնջ ջատագովն է եղել ցեղասպանության ճանաչման: Շելի Բերլին՝ Լաս Վեգասի համայնքի ներկայացուցիչը, քվեարկել է հօգուտ 252 բանաձեւի, իսկ Զոն Սարբանեսը շարունակում է իր հոր՝ Պոլ Սարբանեսի (Մերիլենդից) գործունեությունը: Նա 252 բանաձեւի հովանավորողներից է:

Հ. Ծ.

Կալիֆոռնիա համալսարանը պատվելու է Ռ. Հովհաննիսյանին

Ապրիլի 18-ին Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի շրջանավարտների ասոցիացիան եւ Շրջանավարտների գիտական խմբակի անդամները հանդիսավոր արարողության ընթացքում պատվելու են համալսարանի Հայաստանի արդի պատմության ամբիոնի վարիչ պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանին՝ նրան նվիրելով «Իմ վերջին դասախոսությունը» մրցանակը, որն անցյալ տարի է վերականգնվել երկար ընդմիջումից հետո (1955 թվին է հիմնադրվել) եւ շնորհվում է բոլոր նրանց, ում համալսարանի ուսանողները քվեարկության միջոցով ընտրում են որպես ամենաարժանավորի:

Մրցանակակիր դասախոսից պահանջվում է այդ երեկոյի ընթացքում ուսանողների հետ զրուցել այնպես, կարծես դա իր վերջին դասախոսությունը լինի:

Ռիչարդ Հովհաննիսյանն անդրադառնալու է համալսարանում անցկացրած հիսնամյա ճանապարհին:

Հ. Ծ.

Արցախի բնակչությունն ավելացել է

Արցախի վիճակագրական ծառայության տվյալների համաձայն, այս տարվա հունվարի 1-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը կազմում է 143.574 մարդ, ինչը նախորդ տարվա համեմատ 2.174-ով ավելի է:

Անցյալ տարի ԼՂՀ է տեղափոխվել 1637 մարդ, ինչը 97-ով ավելի է նախորդ տարվա ցուցանշից: Տեղափոխվողների 90 տոկոսը ՀՀ-ից են: ԼՂՀ եկողների թվաքանակը 2.3 անգամ գերազանցում է ԼՂՀ-ից մեկնողների թվաքանակը: Հեռացողները հիմնականում տղամարդիկ են, որոնք հաստատվում են ՀՀ-ում:

Անցյալ տարի Արցախից մեկնել է 446 մարդ: Հայկական երկրորդ հանրապետությունում աճել է ամուսնությունների եւ ամուսնալուծությունների թիվը: Համաձայն վերլուծության՝ Ղարաբաղում 1000 նոր կազմավորված զույգին բաժին է ընկնում 11 ամուսնալուծություն: Թեպետ անցյալ տարի ԼՂՀ-ում գրանցված ծնունդների թիվը նվազել է, սակայն գրանցված ցուցանիշը համարվում է տարածաշրջանում ամենաբարձրը: Առաջին երեխա ունեցող մայրերի միջին տարիքը չի գերազանցում 23-ը:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Անցուդարձ

«Գնում ես Վերնիսաժ՝ զզվանքդ գալիս է»

Պաշտոնավարման 100 օրվա ընթացքում խաղաթղթերը drive է զգալել

Թեպետ, իր խոսքերով, **Կարեն Կարապետյանը** երբեք չի երազել դառնալ խաղաթղթե (ասում են, երբ անցյալ տարի նրան առաջարկել են խաղաթղթի պաշտոնը, հրաժարվել է եւ միայն երկրորդ առաջարկից հետո է համաձայնել դառնալ մայրաքաղաքի գլխավոր կառավարիչ-Հ.Հ.), սակայն այժմ խաղաթղթի պաշտոնից drive է սանում:

«Ինձ ահավոր հետաքրքիր է այստեղ, ես drive եմ զգում այս պաշտոնում աշխատելիս: Այդ բառն եմ ասում, որովհետեւ շատ եմ սիրում այդ բառը»: Ընդհանրապես, Կարապետյանն իրեն խաղաթղթական դեմք չի համարում: Հաշվեստու է ՀՀԿ-ին, սակայն կուսակցությունն իրեն որեւէ առաջադրանք չի տվել: Միակ պայմանը՝ Երեւանի էֆեկտիվ կառավարումն է: Թե ինչով է տարբերվում նախորդ խաղաթղթեներից, կատակով նշում է. «Արտաքինով, էլ ինչո՞վ եք ուզում տարբերվեմ»:

Քաղաքաթղթի պաշտոնավարման 100 օրվա ընթացքում կատարված ամենալուրջ ու կտրուկ որոշումը բացօթյա առեւտրի արգելումն էր: Նախնա խաղաթղթի զարգացման գործում եւ անտարբեր չլինի:

Լայնածավալ բարեփոխումներ է նախատեսվում իրականացնել տրանսպորտի ոլորտում: Հասարակական տրանսպորտային միջոցների աշխատանքի ժամային գրաֆիկի փոփոխությունն օրակարգային հարց է: «Աշխատանքներ կտարվեն առավոտվա պիկը հարթելու ուղղությամբ: Ժամը 8-ին՝ դպրոց, 8-անց կես՝ աշխատանքի եւ 9-ին՝ համալսարան»:

Անցում կկատարվի քարտերի միջոցով միասնական վճարման համակարգի: Դա ենթադրում է, որ խաղաթղթին նախորդ ձեռք կբերի քարտեր, որոնցով էլ կերթեւեկի եւ անձամբ վարորդին գումար չի վճարի: «Դա կվերացնի այն արատավոր երեւույթը, երբ հասարակական տրանսպորտի վարորդը 14-տեղանոց երթուղային տաքսիում 17 ուղեւոր է տեղավորում»:

Մոտ ապագայում խաղաթղթեսարանում կհրաժարվեն երթուղային տաքսիներից՝ նախապատկին խաղաթղթեներն էլ էին արգելել բացօթյա առեւտուրը, սակայն դա ժամանակավոր բնույթ էր կրել. Կարապետյանը, սակայն, առեւտրականների բողոքին տեղի չտվեց՝ բացօթյա առեւտրի արգելումը համարելով ճիշտ եւ օրինական քայլ:

«Մենք կատարում ենք օրենքով մեզ վերապահված գործառույթները: Թող պատգամավորները օրենքը փոխեն, ու Երեւանը վաղը կդառնա շուկա: Եթե օրենք կա, նշանակում է՝ պետք է իրականացնել»:

Քաղաքաթղթի մեկնաբանությամբ՝ բացօթյա առեւտրով զբաղվողների 97 տոկոսը գոհ է օրենքից: «Ընդամենը 3 տոկոսն է դժգոհում, բայց նրանց ձայնն ամենաբարձրն է լսվում: Մոտ օրերս 3 միլիոն-շուկա կբացվի: Ընդհանուր առմամբ նախատեսում ենք 12 միլիոն-շուկա բացել»: Երեւանի էֆեկտիվ կառավարման համար քաղաքաթղթը նոր փիլիսոփայություն է մշակել. եթե որեւէ ոլորտում կա բիզնես տրամաբանություն, ապա այդ ոլորտը պետք է տրամադրել ներդողներին:

Նրա գնահատականով՝ եթե առողջապահությունը, տրանսպորտը, աղբահանությունն ու ավտոկայանատեղիները տրամադրվեն բիզնեսին, ապա վերոնշյալ խնդիրների լուծման համար նախատեսված գումարը քաղաքային իշխանությունները կծախսեն սոցիալական ուղղվածություն ունեցող այն հարցերի կարգավորմանը, որտեղ բիզնես տրամաբանություն չկա:

Վերջերս քաղաքաթղթեսարանը հարցաթերթիկներ է բաժանել բնակիչներին՝ պարզելու, թե որ խնդիրներն են առավել հուզում երեւանցիներին. քաղաքացիները հատկապես դժգոհել են մայրաքաղաքի սանիտարահիգիենիկ վիճակից եւ կանաչապատումից:

«Բնակիչների 15 %-ը դժգոհ է սանմաքրման աշխատանքներից, մինչդեռ բնակչության 40 %-ը աղբահանության համար չի վճարում: Մենք պահանջատեր ենք, որ աղբը մաքրվի, սակայն դրա համար չենք վճարում», ասաց քաղաքաթղթը՝ հավելելով, որ երեւանցին պետք է մեծ ներդրում ունենա քաղաքի զարգացման գործում եւ անտարբեր չլինի:

Կարապետյանին մտահոգում է մայրաքաղաքում կինոթատրոնների սակավությունը: ««Նաիրի» կինոթատրոնի վերաբերյալ ոչինչ չենք կարող ձեռնարկել, որովհետեւ ուրիշի սեփականություն է, եւ քաղաքաթղթեսարանն այստեղ որեւէ դեր ու իշխանություն չունի: Ինչ վերաբերում է կինոթատրոնների խնդրին, ապա համամիտ եմ, որ Երեւանում դրանք շատ քիչ են եւ դա մտահոգիչ է: Դիմել ենք կառավարությանը, որպեսզի Կանազի կինոթատրոնը տրամադրի քաղաքաթղթեսարանին: Այնտեղ ծրագիր ենք իրականացնելու, որ սոցիալապես անապահով երեխաներն անվճար այցելեն կինոթատրոն», «**Ազգ**»-ի հարցին պատասխանեց քաղաքաթղթը:

Անդրադառնալով Ազատության հրապարակում միտինգների արգելմանը՝ քաղաքաթղթը հավաստիացրեց, որ բոլոր երկրներում կան վայրեր, որտեղ հանրահավաք չի անցկացվում:

«Չենք արգելում հանրահավաքը, այլ առաջարկում ենք անցկացնել «Ազատության» հրապարակից 500 մետր հեռավորության վրա՝ Մատենադարանի հարեւանությամբ: Անկողմնակալություն ենք դրսեւորում: Եթե արգելվում է, ապա արգելվում է բոլորին: Այնպես չէ, որ ՀԱԿ-ին արգելում ենք, Ժողովրդական կուսակցությանը թույլ տալիս»:

Հաշվի առնելով քաղաքաթղթի համարձակ ու կտրուկ քայլը՝ քաղաքում արգելել բացօթյա առեւտուրը, լրագրողներից մեկը հետաքրքրվեց, թե քաղաքաթղթը երբ է նախատեսում Երեւանը մաքրել մարմնավաճառներից: Քաղաքաթղթը խոստովանեց, որ Երեւանի փողոցներում նման երեւույթի հանդիպելը իրեն մեծ ցավ է պատճառում. եթե 10 տարի առաջ ասեին, որ նման պատկերի է ականատես լինելու՝ չէր հավատա:

«Կարեն Կարապետյանը համարձակ կլինի՞, թե՞ ոչ, դա իմ գործառույթը չէ, մենք մեր գործառույթն ենք իրականացնում: Դա գուցե ոստիկանության կամ մեկ այլ կառույցի խնդիրն է, սակայն դրանով քաղաքային իշխանությունները չեն կարող զբաղվել»:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. Գ. Facebook սոցիալական ցանցում Երեւանի քաղաքաթղթի էջն արժանացել է 5794 Like-ի: Համացանցի միջոցով քաղաքացիները դիմում են քաղաքաթղթին ու ներկայացնում իրենց խնդիրները: Կարապետյանը հանձնարարել է, որ մայրաքաղաքի վարչական բոլոր շրջանների ղեկավարները նույնպես Facebook-ում էջ ունենան: «Շենգավիթ համայնքի ղեկավար Սարգիս Հովհաննիսյանը կամ հանրությանն առավել հայտնի «Կադիլակ Սերոժը» կկարողանա՞ օգտվել Facebook-ից» հարցին Կարապետյանն ասաց. եթե անձամբ չկարողանա, կօգնեն:

Թե ինչպես վարվել համայնքի այն ղեկավարների հետ, որոնց անուններն անգամ վիրավորական են բնակիչների համար, Կարապետյանն ասաց. «Ինձ էլ Գազի Կարեն են ասում: Ուզում եմ ասել, որ կարեւորը աշխատանքն է եւ այդ աշխատանքի արդյունքը»:

ՎԱՐԿԱՆԻՇ

Սերժ Սարգսյանը ամենաճանաչված քաղաքական գործիչն է Հայաստանում

Համաձայն Mediagid-ի՝ մարս ամսվա ընթացքում հայաստանյան ԶԼՄ-ներում ամենամեջբերված քաղաքական գործիչը Սերժ Սարգսյանն է (607 հիշատակում): Ընդ որում նշվում է, որ նախագահը պահպանում է առաջատարի իր դիրքերը անցած չորս ամիսների ընթացքում: Հայաստանյան լրատվամիջոցներում ամենաշատը մեջբերված քաղաքական գործիչների երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Վերջինս, ըստ Mediagid-ի, առաջ է անցել ՀՀ վարչապետից, որը վերջին ամիսներին անընդհատ լինելով երկրորդը, այժմ՝ չորրորդ մեջբերված քաղաքական գործիչն է: «Լավագույն հնգյակում» են նաեւ «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը եւ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Իսկ հնգյակից դուրս են մնացել պաշտպանության նախարարն ու Երեւանի քաղաքապետը: Փաստորեն, դատելով այս ուսումնասիրությունների արդյունքից, կարելի է նաեւ եզրակացություն անել, թե երկրի կոնկրետ ո՞ր ոլորտն է անցած մարս ամսվա ընթացքում առավել հետաքրքրական եղել հասարակության համար:

Նշելով, որ իրենց «Քաղաքականություն» բաժինը դիտարկումների թվով ամենաճանաչվածն է, Mediagid-ը ներկայացնում է նաեւ հայաստանյան ԶԼՄ-ներում ամենամեջբերված ընկերությանը, մարզիկներին, շոու բիզնեսի ներկայացուցիչներին: Մասնավորապես համաձայն ուսումնասիրության, լրատվամիջոցներում ամենամեջբերված ընկերություն է ճանաչվել VivaCell-MTS բջջային օպերատորը, մարզիկը՝ բախմաստիս Լեւոն Արոնյանը, շոու բիզնեսի ներկայացուցիչ՝ երգչուհի Էմին: Սպորտի բնագավառում լավագույն հնգյակում է ընդգրկվել Հայաստանի ֆուտբոլի հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը:

Հ. Ա.

Երեւանի տրանսպորտն ուրիշ խնդիրներ չունի՞

Քանի վարորդների սպիտակած լինել-չլինելը

Երեւանի քաղաքաթղթեսարանը երեկ հաղորդագրություն էր տարածել, որ քաղաքաթղթե **Կարեն Կարապետյանը** հանձնարարել է ուսումնասիրություններ իրականացնել ներքաղաքային երթուղիներում, շարժակազմերի փաստացի քանակի, արտաքին տեսքի եւ սանիտարական վիճակի, երթուղիների սպասարկման վիճակի, վարորդների արտաքին տեսքի եւ նրանց կողմից թույլ տրվող խախտումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Ի՞նչ կարելի է ասել քաղաքաթղթի այս նախաձեռնության մասին: Առնվազն ծիծաղելի է, երբ Երեւանի տրանսպորտի հիմնական խնդիրները թողած՝ քաղաքաթղթը սեւեռվել է մեքենաների լվացված կամ վարորդների սպիտակած լինել-չլինելու վրա, որոնք անշուշտ կարեւոր են, սակայն ամենակարեւորները չեն: Ներկայացնենք դրանցից մեկ-երկուսը, որոնց հասարակական տրանսպորտից օգտվող յուրաքանչյուր երեւանցու նման բախվում ենք ամեն օր:

Երեւանի հասարակական տրանսպորտի գլխավոր հարցը ուղեւորների սպասարկման համար անբավարար շարժակազմի առկայությունն է: Վաս չէր լինի, որ Երեւանի քաղաքաթղթը կամ տրանսպորտի վարչության պետը գոնե մեկ անգամ, գոնե իրենց մեքենաների մեջ նստած, հետեւեն, թե ի՞նչ է կատարվում միջնականգառներում առավոտյան ժամը 8-10 կամ հակառակ ուղղությամբ՝ երեկոյան ժամը 17-19: Աշխատանքից չուշանալու կամ երեկոյան տուն հասնելու համար կանգառներում կուտակված մարդիկ հարկադրված են պարզապես խցկվել թվում է, թե այլեւս տեղ չունեցող միկրոավտոբուսների մեջ, իրենց ստորացուցիչ վիճակի մեջ դնելով: Կանխատեսելով չինովնիկական առարկությունը, թե «պիկ» ժամերին ուղեւորահոսքն ավելանում է, ասենք, որ նախ՝ ոչ «պիկ» ժամերին իրավիճակը շատ չի տարբերվում, եւ երկրորդ՝ այդպես ասող չինովնիկներն էլ թող աշխատանքի գան եւ տուն վերադառնան նույն տրանսպորտով, ինչ մնացած երեւանցիները եւ միայն դրանից հետո բերեն այս արդարացումները:

Հաջորդը միկրոավտուբուսները ավտոբուսներով փոխարինելու հիմնահարցն է, որը սերտորեն կապված է նախորդ խնդրին եւ որի մասին անընդհատ խոսում են առանց բացառության Երեւանի բոլոր քաղաքաթղթները: Ասել, թե ոչինչ չի փոխվել այս առումով, ճիշտ չի լինի: Սակայն ակնառու է նաեւ, որ վերջին տարիներին Երեւանում ավելացած նոր ավտոբուսները ուղեւորների տեղափոխման հարցը չեն լուծել, որ դրանց թիվը դեռ անբավարար է, եւ դրանց թիվը վերջին երկու տարում գրեթե չի ավելացել: Այս հարցն էլ իր հերթին շաղկապված է տրանսպորտային փոխադրումների սակագնին, քանի որ դիզելային վառելիքով աշխատող ավտոբուսները չեն կարող շահութաբերությամբ աշխատել 100 դրամ սակագնի պարագայում: Սակագնի բարձրացումն էլ անպայման սոցիալական դժգոհություններ է առաջացնելու: Այս հարցով պետք է նախ եւ առաջ մտահոգվի քաղաքաթղթը, որից հետո միայն վարորդների կամ մեքենայի արտաքին տեսքով: Որպես լուծման գուցե միջանկյալ տարբերակ կարող ենք առաջարկել ավտոբուսային առավել երկար երթուղիներ սահմանելը, որտեղ ուղեւորահոսքն ավելի մեծ է: Ի դեպ, ուղեւորահոսքի մասին:

Երեւանի նոր քաղաքաթղթը նույնպես, ըստ նախկինում հրապարակված հաղորդագրության, հանձնարարել է կազմել Երեւանի քաղաքային տրանսպորտի նոր երթուղային ցանցը՝ հաշվի առնելով ուղեւորահոսքը: Արդեն հաշիվը կորցրել ենք, թե քանի անգամ է կազմվել այդ ցանցը, քանի միլիոն դրամ է պետությունը ծախսել ամեն անգամ նոր ցանց «հյուսելու» համար, եւ քանի անգամ է այն դեն նետվել, քանի որ հակասել է երթուղայինների գծատերերի շահերին: Արժե՞ հերթական անգամ նոր երթուղային ցանց պատվիրել, որպեսզի հերթական անգամ աղբարկղը գցվի:

Երեւանի տրանսպորտի հիմնահարցերը սրանք են, որոնք եթե որոշակի ժամանակ են պահանջում, ապա կան այլ հարցեր, որոնք պակաս կարեւոր չեն սրանցից եւ շատ ավելի կարեւոր են, քան այն, ինչ հարցերով որոշել է զբաղվել քաղաքաթղթեսարանը: Օրինակ՝ նույն միկրոավտոբուսների անսարք վիճակը, դրանց ներսում նստելատեղերի խարխուլ կացությունը՝ դրանց դուրս ցցված մետաղյա կտրող մասերը կամ ուղեւորների անմիջապես ոտքերի տակ տեղադրված ու առանց ծածկի գազի բալոնները: Սրանք ուղեւորների կյանքն ու առողջությունն անմիջականորեն վտանգող փաստեր են: Կամ կանգառների ծանրաբեռնվածությունը, որը հաճախ հնարավորություն չի տալիս այս կամ այն միկրոավտոբուսին կամ ավտոբուսին մոտենալու մայթին: Ինչին էլ ավելանում է կանգառներում տաքսիների խայտառակ հեղեղվածությունը, որոնք մարդկանց կանգնելու տեղ չեն թողնում, շատ հաճախ էլ ուղղակի մեքենան քշում են կանգնածների վրա՝ իրենց նոր կայանման տեղ գտնելու համար: Մի՞թե սրանք այդքան դժվար լուծելի են Երեւանի քաղաքաթղթի համար կամ մեծ միջոցներ են պահանջում: Կարծում ենք, որ ոչ: Իսկ եթե դրանց մասին քաղաքաթղթին տեղյակ չեն պահել, ապա նա դեռեւս կադրային խնդիրներ ունի լուծելու: Այս հրապարակմամբ մենք տեղյակ ենք պահում այդ խնդիրների մասին եւ սպասում դրանց լուծմանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայրն է առաջին հերթին պատասխանատվություն կրողը

Ինձ թույլ եմ տալիս աղագա հայ (եւ ոչ միայն հայ) ճանաչարհորդների աղագա կենսագիրներին խորհուրդ տալ, որ ուշադիր լինեն անծանոթ կամ փիչ ծանոթ բառեր ու տերմիններ օգտագործելիս, որոնք «կարիք ունեն» բացատրության: Պետք չէ հետեւել ինքնագոհ պիժոնների օրինակին, որոնք կարծում են իբր չգիտեք, փնտրեք բառարանում՝ կգտնեք: Նման դեպքերում իմաստուն Վիկտոր Ասատֆեւը, որի հետ ընկերանալու երջանկությունն եմ ունեցել (միասին էինք «Բայկալյան շարժում» բնապահպանական կազմակերպությունում), խորհուրդ էր տալիս. «Խնայեք յարոսլավյան, վոլոգդյան կամ ռյազանյան ծեր կնոջը, որը սիրում է կարդալ, բայց գլուխ չի հանում խրթին տերմիններից»: Հարկավ ինքնագոհ պիժոնն ի պատասխան այստեղ էլ ասելու բան կգտնի. «Ծեր կանայք հասաս չեն կարդում»: Իսկ ես կարծում եմ, որ այսօր կարդացողները միայն նրանք են: Նույնիսկ կասեի, թե նրանք գրքասերներից վերջին մոհիկաններն են: Նախապատրաստվելով արշավանքին եւ իմանալով, որ Նոր Զելանդիա ենք այցելելու, ես մի փոքր անցկացրի, որին հիմա սոցիոլոգիական հարցում են անվանում: Մի քանի ծանոթների հարցրեցի, թե ինչ է մառին:

Հարցվածներից միայն տասներորդը կամ տասներկուերորդն ասաց, թե դա «մի ինչ-որ ազգություն է»: Իսկ հարցը ծագել էր, երբ կարդալով Նոր Զելանդիայի մասին, իմացել էի, որ այդ երկրի լեզուներն են «անգլերենը եւ մառին»: Բայց ես ինչպե՞ս վերցնեմ ու այդպես էլ գրեմ: Անգլերենը՝ հասկացանք: Իսկ մառի՞ն: Ուրեմն պետք էր այլ աղբյուրներում փնտրել ու պարզել, որ դա պոլինեզիական ժողովրդի ինքնանվանումն է, նաեւ պոլինեզիական լեզուն, որը ներառված է ավստրալիական լեզուների մեծ ընտանիքում: Այնպես որ, երբ Զեյմս Կուկը եկավ այստեղ, նա բոլորովին էլ չհայտնագործեց այս կղզիները: Այստեղ մի ամբողջ ժողովուրդ էր ապրում՝ իր մշակույթով, որի մեջ մտնում է նաեւ մայրենի լեզուն: Մառիները նվաճողներին երբեք աղ ու հացով չեն դիմավորել: Պատերազմների համաշխարհային պատմության մեջ է մտել նաեւ 1843-1873 թվականների մառիական պատերազմը: Երեսուն տարի շարունակվել է զինված դիմադրությունը: Եվ եթե նրանց մայրենի լեզուն պաշտոնապես պետական է համարվում, ապա շնորհիվ նրանց, ովքեր զենքը ձեռքին ելել են եկվորների դեմ: Այդպես եղել է եւ այդպես կլինի միշտ:

...Ինչպես արդեն ասել եմ, առաջինը Մեծ Բրիտանիայից են հայեր եկել Նոր Զելանդիա: Զոհրաբյանների տոհմը, որոնք իրենց ազգանունը կրճատեցին մինչեւ Զոհրաբ: Համարյա մեկ ու կես դար ազգանվան վերածված այդ անունը հնչել է այստեղ: Այդ ժամանակ թնդում էր նաեւ ժողովրդի կողմից շատ սիրված մի բժշկի համբավը, որը կրճատել էր եւ՛ անունը, եւ՛ ազգանունը. Սեդ Սամ: Կարծում եմ, նա Սեդրակ Սամվելյան էր: Իսկ գուցեեւ սխալվում եմ: Համաժողովրդական սիրո շնորհիվ Սեդ Սամը նույնիսկ ընտրվել էր ինքնավարության իշխանական կառույցներում: Անցած դարում մոտ հիսուն հայեր են ապրել երկրում, եւ փաստաթղթերը վկայում են, որ նրանք հարգված են եղել: Նոր Զելանդիայում ապրում է հայուհի Արբուհի Էլիասը՝ պետական գործիչ, երկրի Գերագույն դատարանի նախագահ: Նրա մասին առանձին կոպատմեմ, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Երեւանի «Ամարաս» հրատարակչությունում տպագրության պատրաստվող «Հայուհիներ» երկհատորյակի հերոսուհիներից մեկն է:

Հայ վերաբնակիչների երկրորդ ալիքը եւս շուտով գրվեց: Եվ ահա եկավ երրորդը: Ամբողջ ընտանիքներ, հիմնականում փախստականներ Մերձավոր Արեւելքից, եկան Օքլենդ եւ մայրաքաղաք Վելինգտոն: Նրանց մեջ կային նաեւ փախստականներ Բաքվի հայերից, ինչպես եւ Վրաստանից: Դա անցած հարյուրամյակի ինքնուրույն թվականների սկզբին ու կեսերին էր: Եվ թերեւս տրամաբանական է, որ գերակշռում էին Իրաքից գաղթածները: Արդեն իրական առաջին պատերազմից հետո, որն սկսել էր Բուշ ավագը: Ի դեպ, մեր երթուղում հանդիպել ենք նաեւ իրաքցի հայերի, որոնք արդեն Բուշ կրտսերի սանձազերծած պատերազմից հետո էին թողել երկիրը: Ոմանք անիծում էին նախագահ հորը, ոմանք էլ՝ նախագահ որդուն: Կյանքում նման բան էլ է պատահում:

Բլոկնոտը ձեռքիս, հանդիպել եմ բոլոր հայ ընտանիքների հետ: Ուշադրություն եմ դարձրել, որ համարյա բոլորը հասուն զավակներ ունեն: Եվ դժվար չէր գուշակել, որ ինքնուրույնությունների կեսերին գործող կիրակնօրյա դպրոցն այսօր արդեն գոյություն չունի:

Դպրոցը միավորում էր համայնքը: Գտնվեցին տարբեր առարկաների ուսուցիչներ: Միասին էին լուծում բոլոր կազմակերպչական խնդիրները: Միջոցառումներ էին անցկացնում: Եվ ահա դպրոցը չկա, եւ կան խնդիրներ, խնդիրներ...Եվ սակայն համայնքն ապրում է: Ունի խորհուրդ, ունի ղեկավարություն: Վերջվերջո թվով մոտ հարյուր հոգի են եւ բոլորն էլ ճանաչում են միմյանց: Ի դեպ, շատ են զգուշանում, որ իրենց մոտ հանկարծ կուսակցություն չառաջանա: Վախենում են պառակտումից:

Իսկ որքա՞ն տարբեր են ճակատագրերը: Գրիգորյանների ընտանիք. Ալեքսանը, Մերին եւ նրանց որդիները՝ Վահեն եւ Էրիկը: Ոչ մեծ տարածքում կինն ու որդին մի փոքրիկ խանութ են կահավորել եւ խորտկարանի կամ բիստրոյի նման մի բան: Հազիվ են ծայրը ծայրին հասցնում: Ժպտում են: Ուրախանում են: Իսկ ես նրանց աչքերում տեսնում եմ, չէի ասի, թե վիշտ, այլ դառնություն: Մշտապես հոգին տանջող մի բան: Ավագ որդին՝ Վահեն, հիվանդ է ծնվել, բժշկության մեջ ամենասարսափելի ախտորոշումներից մեկով: Բայց բարեբախտաբար (հասկանում եմ, բառը տեղին չէր) տղան, ավելի ճիշտ՝ արդեն տասնյոթամյա պատանին խելացի է, տաղանդավոր: Սթափ գիտակցում է իր վիճակը: Իր ֆիզիկական հնարավորությունները: Եվ այդ պատանին անհատնում կամքի ուժով առաջին հերթին ինքն իրեն է համոզել, որ միայն մեկ ելք կա ստեղծված իրադրությունից. հաղթահարել չափերով ահռելի թերարժեքության բարդույթը: Դեռ փոքրուց ըմբռնեց, որ պետք է հաշտվել անխուսափելիի հետ եւ դա անել գործուն կերպով:

Վահեն ինքնուրույն ամեն օր ավտոբուսով գնում է համալսարան եւ վերադառնում տուն: Եվ ոչ մի անգամ չի նկատել, որ ինչ-որ մեկն աչքերը չռի իր վրա: Որ խղճահարություն արտահայտի: Եվ նույնն է նաեւ համալսարանում՝ դասախոսությունների եւ սեմինարների ժամանակ: Նա հավասար է բոլորին: Եվ այդ ամենի մեջ կարելի է տեսնել նորմալ մարդկային արժանապատվություն՝ մի կողմից եւ գթասրտություն՝ մյուս: Ասենք, թվում է՝ Վահեն ինքն էլ հսկայ եւ փիլիսոփայաբար գիտակցել է, որ խղճահարությունը պետք է դրսեւորել կենդանիների նկատմամբ, իսկ մարդու հանդեպ՝ գթասրտություն առանց ցուցամոլության: Եվ այդ ամենում հսկայական դեր ունեն սիրող ծնողները, որոնք քուն ու հանգիստ չունեն: Մայրը երբեք չի մոռանում, թե ինչպես իր դեռեւս յոթնամյա Վահեն հարցրեց, թե ինչու է միայն ինքը ծնվել այդպիսին: Ինչո՞ւ են ընտրել հենց իրեն:

...Ծնողներ: Ծնողները Սփյուռքում: Վաղուց եմ համոզվել, որ Սփյուռքի ծնողները դեռեւս չբացահայտված թեմա են, բայց պահանջ կա դա անելու: Այո, մենք ծովարշավը նվիրել ենք Սփյուռքի հայ մայրերին: Այդ նրան՝ հայ մորն ենք պարտական, որ Սփյուռքը մնաց հայկական, որ հայի մեջ պահպանվեց հայը, պահպանվեցին լեզուն, ավանդույթները, օրորոցային երգերը, ազգային խոհանոցի համն ու հոտը, պատմական հիշողությունը: Եվ դա իրոք այդպես է: Իսկ այ, հոր մասին լռում ենք: Իսկ ի՞նչ ասես: Հայրը մնում է հայր: Սրանով ամեն ինչ ասված է: Այ, Հակոբ Ելդուզյանը: Բաղդադի համալսարանն է ավարտել նեղ մասնագիտությամբ՝ վիճակագրություն: Այդպես էլ չհասկացավ, թե ինչու սկզբում Բուշ ավագը, ապա Բուշ կրտսերը շարունակեցին ավերել Իրաքը, եթե չէին գտնելու երկրում այն, ինչի պատճառով պատերազմ հայտարարեցին. ո՛չ միջուկային, ո՛չ կենսաբանական զենք: Երկու փոքրիկ զավակներ ունի: Որդին՝ Ռաֆֆին, եւ դուստրը՝ Հուրին: Կինը՝ Սալբին, համահայկական բարեգործական միության ակտիվ գործիչներից է: Նախնիները Բաղդադից են: Հարյուր, երկու հարյուր տարի խոսել են հայերեն, հաճախել են հայկական դպրոց, հայկական եկեղեցի: Եվ հանկարծ այդ ամենը չկա, ասես չի էլ եղել: Եվ նա խելահեղ կերպով սկսեց նոր կեր փնտրել մոլորակի վրա: Գտավ: Նոր Զելանդիա: Երկար պատմություն է, թե ինչպես հասավ կղզիներին: Մոտ տասը ամիս աշխատեց օրական տասնութ ժամ: Կատարեց ամենասեւ, ամենածանր, ամենակեղտոտ աշխատանքը: Նաեւ ամիսներով պատվիրված պիցցա էր ռեստորաններից ուրիշների տները տանում տափակ տուփերով: Հավատացին նրան: Վստահեցին: Եվ միայն այդ ժամանակ աղառիկ բնակարան ձեռք բերելու հնարավորություն ստացավ: Տեղափոխեց ընտանիքը: Իր նման հայրենակիցների հետ կիրակնօրյա դպրոց կազմակերպեցին, որը ղեկավարում էր Սալբին:

Հիմա ամեն ինչ ունեն: Երեխաները համալսարանն են ավարտում: Բայց, ինչպես ասում է Հակոբը, ոչ մեկին նման երջանկություն չէր ցանկանա: Քսանհինգ տարի դեռ պետք է աշխատել պարտքերը փակելու համար: Վաստակի մեծ մասը հենց դրա վրա է ծախսվում: Հարցնում եմ՝ ինչպե՞ս ես կարողացել դիմանալ այդ ամենին: Ժպտում է. «Հայր եմ, չէ՞: Իսկ դա պատասխանատվություն է»:

Եվ այսպիսին են բոլոր հայրերը: Սերջիկ Սուքիասյանը կնոջ՝ Հերմինեի հետ դարձավ հայ համայնքի հիմնադիրը: Ծնունդով Հին Զուղայից նրա նախնիները չորս դար ապրել են Իրանում: Ինչպեսեւ շատ հազարավորներ: Եվ ինչպես շատ հազարավորներ, 1979 թվականին թողեցին այսպես ասած նոր հայրենիքը՝ Նոր Զուղան, որպեսզի փրկեն իրենց ընտանիքները: Չգիտեր, թե ինչով է զբաղվելու: Գիտեր միայն, որ աշխատելու է օր ու գիշեր: Այլ ելք չկար: Ինքն էլ այդպես ասաց. «Այլ ելք չկար»: Եվ անցնելով երիտասարդ սեւագործ բանվորի պարտադիր նախնական ուսուցում, զբաղվեց ինչ աշխատանքով ասես, որը ոչ մի կերպ մեկ-երկու բառով հնարավոր չէ նշել: Նա ներքնային տառերի վարպետ է, որոնցով գովազդային հանձնարարականներ է պատրաստում ցուցափեղկերի եւ պատերի վրա:

Պարզվում է, նույնիսկ նման աշխատանքը (իսկ գուցեեւ առաջին հերթին) կախված է ճգնաժամից եւ տարերային աղետներից: Իսկ նրա կին Հերմինեն աշխատանքի տեղավորվեց բանկում: Սկզբում չգիտեր, թե ինչ կստացվի: Հիմա ապրում են նորմալ տանը: Ունեն նորմալ ավտոմեքենաներ: Մեծացնում են Շանթ որդուն եւ Սոսե դստերը: Եվ ինչպես Հակոբը, կկարողանան պարտքերը մարել միայն քառորդ դար անց: Եվ այն էլ պայմանով, որ միշտ աշխատանք ունենան: Ես ուշադրություն դարձրի, որ Սփյուռքում ծնողները ոչ մի որոշ չեն բաժանվում այն տագնապալի մտքից, որ ապրում են պարտքով:

Մեծագույն անհրաժեշտություն կա ընթերցողներին պատմելու եւս մի քանի ընտանիքների մասին: Բայց կհետաձգեմ: Քանզի ընդհանրապես բոլոր գործերը սիրված եղա հետաձգել: Հարկավոր է շատ նյութ հավաքել: Հենց նոր իմացա, որ Նոր Զելանդիայում գտնվել է Սարյանի նկարներից մեկը: Առայժմ չգիտեմ, թե որտեղ է ապրում մեծ նկարչի ստեղծագործության փաստացի տերը: Գիտեմ միայն, որ ինտերնետով դիմել է Երեւանի Սարյանի թանգարան, խնդրելով պարզել դրա արժեքը: Հեռախոսով այդ մասին ինձ հայտնեց «Ամարաս» հրատարակչության տնօրեն Արկադի Ասրյանը եւ ասաց, որ այդ մասին գրված է «Գոլոս»-ում, խոստանալով, որ անհապաղ ինձ կուղարկի հոդվածը էլեկտրոնային փոստով: Չէ՞ որ առայժմ իմ կապը միակողմանի է:

ՋՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Նոր Զելանդիա

Անօրինական արտագաղթի վտանգների եւ օրինական միգրացիայի ուղիների մասին սեմինար Գյումրիում

Հայաստանից բնակչության արտագաղթի իբր ահագնացնող չափերի հասնելու մասին խոսակցությունները, այդ աժիոտաժն արհեստական են, իրականում միգրացիոն հոսքերն այնքան էլ մեծ չեն: Անցած ուրբաթ Գյումրիում կազմակերպված՝ միգրացիայի խնդիրներին նվիրված միջազգային սեմինարում այսպիսի հավաստում արեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության պետական միգրացիոն ծառայության պետ Գագիկ Եգանյանը: Նրա ներկայացրած տեղեկություններով՝ հանրապետությունից մեկնածների եւ վերադարձողների տարբերությունը եթե 2009 թվականին կազմել է 25600, ապա 2010-ին՝ 29000 մարդ, այսինքն ավելացել է ընդամենը 3400-ով: Ինչ մնում է Ռուսաստանի կողմից իրականացվող «Հայրենակիցներ» միգրացիոն ծրագրին, ապա դրա հետ, որն Եգանյանի հավաստմամբ, Հայաստանի կառավարությունը կապ չունի: 2007 թվականից գործող այդ ծրագրում մինչեւ այժմ ընդգրկվել է 526 ընտանիք...

Ասվածն, անշուշտ, չի նվազեցնում այն խնդրով զբաղվելու կարեւորությունը, որն ամենահուզողներից մեկն է մնում մեր հասարակության համար: Նշված սեմինարը հրավիրել էր Ինտեգրացիայի եւ էմիգրացիայի ֆրանսիական գրասենյակը՝ Ընկերական օգնության հայկական ընկերակցության, «Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի» եւ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության հետ արդեն երկու տարի իրականացվող, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում: «Ինստիտուցիոնալ աջակցություն միգրանտների վերաբերյալ տեղեկատվությանը եւ համագործակցություն Հայաստան վերադարձող հայերի տնտեսական վերաինտեգրման բնագավառում» ծրագրի հիմնական նպատակներից են անօրինական միգրացիայի կանխարգելումն ու միգրացիոն հոսքերի օրինականացումը, աջակցությունը Հայաստան վերադարձող միգրանտների սոցիալական ինտեգրացմանը: Այս առումներով կարեւորվում է, մասնավորապես, պոտենցիալ միգրանտների իրազեկումը, այդ թվում՝ զբաղվածության ոլորտի ծառայությունների եւ ՋԼՄ-ների միջոցով: Նույն շրջանակներում երկու սեմինար կազմակերպվել է Երեւանում, իսկ երրորդը որոշվել էր Գյումրիում անցկացնել:

«Ձեր մարզից միգրացիոն հոսքերն ավելի ակտիվ են, ավելի մեծ ծավալների են հասնում»,- իր բացման խոսքում նշեց Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության հյուպատոս Ֆրեդերիկ Գրապեն, ինչը հաստատեց նաեւ ՀՀ միգրացիոն ծառայության պետը: Հայաստանից մարդկանց արտագաղթի մի զգալի մասն ուղղվում է դեպի Ֆրանսիա: Պրն հյուպատոսը հորդորեց չհավատալ ոսկե սարեր խոստացող անհատներին ու կազմակերպություններին, չծախսել ավելորդ հազարավոր դոլարներ եւ Ֆրանսիա մեկնելու համար ապավինել միայն օրինական ճանապարհներին:

Պրն Գագիկ Եգանյանը սեմինարում ներկայացրեց անկանոն կամ անօրինական միգրացիայի դեմ պայքարի ՀՀ կառավարության մշակված ռազմավարությունը, նաեւ՝ վերադարձողների համար մեր երկրում իրականացվող վերաինտեգրման ծրագրերը: Անօրինական միգրացիայի վտանգներին, կամավոր վերադարձի եւ տնտեսական վերաինտեգրման գործընթացներին, օրինական միգրացիայի ուղիներին, աշխատանք փնտրող անձանց շրջանում իրականացվող աշխատանքներին եւ այլ հարցերի անդրադարձներ էին Ներգաղթի եւ ինտեգրացիայի ֆրանսիական գրասենյակի ներկայացուցիչ Մարթա Բրիզի, ՀՀ միգրացիոն ծառայության բաժնի պետ Համբարձում Աբրահամյանի, Զբաղվածության պետական ծառայության Գյումրու մարզային կենտրոնի տնօրեն Ամալյա Ադամյանի, այլոց ներկայացրած զեկուցումները:

Գ. Մ.

ԱԶԳ **Միջազգային**

Արեւմուտքը հոգատարություն է ցուցաբերում ապրիլի 2-ին Բաքվում ձերբակալված ցուցարարների հանդեպ

Մինչդեռ ձերբակալված, թե ոչ՝ ադրբեջանցին սպանության նկատմամբ հակում ունեցող միեւնույն հրոսակն է

«**Ազգի**» ապրիլի 6-ի համարում, անդրադառնալով Բաքվում համաժողովրդական հանրահավաք կազմակերպելու ընդդիմության ապրիլի 2-ի փորձին, որի շուրջ 1000 մասնակիցներից 150-ին ոստիկանությունը ձերբակալել էր, իսկ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները մարդու իրավունքների ոտնահարման համար մեղադրել էին Իլհամ Ալիեւին, այդ մեղադրանքները պայմանավորել էինք Ռուսասան-Ադրբեջան մերձեցմամբ: Միաժամանակ չէինք բացառել, որ դրանք արեւմտյան տերությունների համար Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու նախապայմանների ստեղծման նպատակ հետապնդեին, այլ ոչ թե լինեին մարդու իրավունքների նկատմամբ սկզբունքայնության դրսեւորում:

Ինչ առումով: Այն, որ ադրբեջանցի ցուցարարների ձերբակալության համար Բաքվի իշխանություններին դատապարտող միջազգային այս կազմակերպությունները երբեւէ չեն դատապարտել մարդասպան սահակին երկրում ազգային հերոս հռչակելու ադրբեջանական դրսեւորումները: Այսինքն, անկախ իրավապաշտպանի կոչումից, այս կազմակերպությունները սկզբունք չունեն: Նույնը վերաբերում է եվրոպական կառույցներին, համանուն երկրներին եւ հատկապես ԱՄՆ-ին:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ «Դունիա բուլթենի» լրատվական գործակալության «Արեւմուտքը սերտ շփումների մեջ է ադրբեջանական ընդդիմության հետ» վերնագրով ապրիլի 11-ին հրապարակած հոդվածին: Հոդվածում նշվում է, որ վերջին ամիսներին ադրբեջանական ընդդիմության աճխուժացումն ու երկամյա դադարից հետո հակակառավարական ցույցերի կազմակերպումը հետաքրքրություն են առաջ բերել արեւմտյան երկրներում, Ադրբեջանում այս երկրների դեսպաններն ու եվրոպական կառույցների ներկայացուցիչները «Մուսաֆաթ» կուսակցության շենքում հանդիպել են այլընտրանքային խորհրդարանի ներկայացուցիչների հետ:

Դռնփակ այս հանդիպումը տեւել է շուրջ 2 ժամ, որին մասնակցել են այլընտրանքային խորհրդարանի եւ «Մուսաֆաթ» կուսակցության նախագահ Իսա Ղամբարը, Ադրբեջանի «Ժողովրդական ճակատ» կուսակցության նախագահ Ալի Քերիմլին եւ Ադրբեջանի «Ազգային անկախություն» կուսակցության նախագահ Յուսիֆ Բաղիրզադեն: Արեւմուտքի ներկայացուցիչները, չնայած լրագրողների համառ հարցերին, հանդիպման վերաբերյալ որեւէ հայտարարություն չեն արել: Պարզապես Ղամբարն ու Քերիմլին ասել են, որ հանդիպումը անցկացվել է ԵԱՀԿ Բաքվի գրասենյակի ղեկավար Զանֆորելի, Ադրբեջանում Եվրոմիության ներկայացուցիչ Կոբիայի, Եվրախորհրդի Բաքվի գրասենյակի ղեկավար Երոկոսոպուլասի, Ադրբեջանում Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրիայի, Նորվեգիայի, Լեհաստանի, Բուլղարիայի եւ այլ երկրների, ինչպես նաեւ ԱՄՆ-ի դեսպանի օգնականի մասնակցությամբ: Ենթադրվում է, որ հանդիպմանը քննարկված լինեն ապրիլի 2-ին ցույցի մասնակիցների ձերբակալմանն ու Ադրբեջանում խոսքի ազատությանն առնչվող խնդիրներ:

Այդ ընթացքում Ադրբեջանի հանրային հեռուստատեսությունը, մասնավոր հեռուստաընկերություններն ու իշխանական մամուլը շարունակել են մեղադրել ընդդիմությանը: Մեղադրանքներին միացել են նաեւ Միլի մեջլիսի պատգամավորները: Սրանցից Զահիդ Օրուջը նախազգուշացրել է Արեւմուտքին, թե ցուցարարները դեռեւս իսլամի կանաչ դրոշը չեն պարզել, սակայն առաջիկա ցույցերում միանգամայն հնարավոր է, որ պարզեն: Նա միաժամանակ զարմանք է արտահայտել ցույցերի հանդեպ BBC-ի, CNN-ի եւ «Ալ Ջազիրայի» ցուցաբերած հետաքրքրության համար, խորհուրդ տալով Արեւմուտքին այդ հետաքրքրությունը ցուցաբերել ղարաբաղյան հիմնահարցի առնչությամբ:

Բաքվի պետհամալսարանի ռեկտոր Աբել Մուհարամովը հանդես է եկել Օրուջի դիրքերի պաշտպանությամբ: Պատգամավոր Կուլիեւը քննադատել է ԵԱՀԿ-ի եւ հանդիպման մասնակից արեւմտյան գործիչների մոտեցումը, Միլի մեջլիսի նախագահ Օթայ Ասադովը ասել է, որ հակակառավարական ցույցերը չեն բխում երկրի շահերից, եւ դրանք համեմատել է Սումգայիթի իրադարձությունների հետ, որոնք, այս ադրբեջանցի հրոսակի երեւակայությամբ, կազմակերպել են ՊԱԿ-ն ու հայերը, սպանություններ կատարել, որպեսզի ի լուր աշխարհի հայտարարեն, թե Ադրբեջանում ցեղասպանություն է կատարվում:

Ադրբեջանցին, անկախ պաշտոնից կամ կարգավիճակից, մարդասպան տականք է: Եթե ղարաբաղյան պատերազմում մենք լուծեինք Սումգայիթում խոշտանգված մեր անպաշտպան քույրերի եւ եղբայրների վրեժը, ապա Միլի մեջլիսի նախագահի պաշտոնը զբաղեցնող Ասադով կոչված այս հրոսակը չէր լկտիանա: Խնդիրը, սակայն, ադրբեջանցի հրոսակը չէ, այլ տականքների, թեկուզ ձերբակալված, նկատմամբ եվրոպական կառույցների եւ արեւմտյան տերությունների հոգատարությունը: Ադրբեջանում տեղի ունեցող զարգացումները, եթե այս կառույցներին եւ տերություններին հետաքրքրում են ձերբակալվածների նկատմամբ հոգատարություն դրսեւորելու համար, մեզ էլ պետք է հետաքրքրի վերջիններիս հայ ժողովրդի եւ ադրբեջանցի ոհմակի հանդեպ մոտեցումներում կիրառած երկակի ստանդարտների առումով: Ադրբեջանցին, իշխանություն կներկայացնի, թե ընդդիմություն միեւնույն տականքն է, ձերբակալված լինելը հազիվ թե փոխի սպանության եւ մարդասպանի նկատմամբ այս տականքի անզուսպ հակվածությունը:

ՀԱԿՈԲ ՉԱՔԻՐՅԱՆ

Հիմա աղքա՞տ են, թե՞...

Իլհամ Ալիեւը մի արտառոց հրամանագիր է ստորագրել: Ըստ այդմ, «ներվում են բնակչության՝ օգտագործած ջրի դիմաց առ 2011թ. փետրվարի 1-ը կուտակված պարտքերը»:

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե խոսքը վերաբերում է բնակչության ինչ-որ խավերի: Ասենք՝ թոշակառուներին կամ հաշմանդամներին: Իրականում, սակայն, ինչպես տեղեկացնում է «Ազերտաճ» ընկերությունը, «հրամանագիրը տարածվում է բնակչության 85 տոկոսի վրա, իսկ դուրսգրման ենթակա է 294, 2 միլիոն մանաթ»: Չի մանրամասնվում, թե հիշյալ գումարի պարտքն ի՞նչ ժամանակահատվածում է կուտակվել:

Բայց, ամեն դեպքում, խոսքը բավական մեծ գումարների մասին է: Դրանից կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի բնակչության 85 տոկոսի եկամուտներն այնքան ցածր են, որ մարդիկ չեն կարողանում մուծել օգտագործած ջրի վարձը: Կամ էլ բնակչությունը փող ունի, բայց ջրի դիմաց չի վճարում:

Երկու դեպքում էլ փաստը, որ նախագահական հրամանագրով դուրս են գրվում բնակչության՝ օգտագործած ջրի դիմաց կուտակված պարտքերը, հերքում է Ադրբեջանի պետական քարոզչությամբ մատուցված պատկերը:

Եթե մարդիկ փող չունեն, որպեսզի կոմունալ-կենցաղային ծառայությունների դիմաց վճարեն, նշանակում է Ադրբեջանի «տնտեսական հաջողությունները», որոնցով առիթանառիթ հպարտանում է Իլհամ Ալիեւը, պարզապես փուչիկ են:

Իսկ եթե այդպես չէ, բնակչության եկամուտներն իրոք աճել են, բայց նրանք ջրի դիմաց մուծումներ չեն կատարում, ապա պիտի ենթադրել, որ հասարակությունն Ադրբեջանում պարզապես անիշխանական է:

Այս դեպքում էլ ծագում է «ոչ մի ուժ չի կարող սասանել իշխանության եւ ժողովրդի միասնականությունը» կարգախոսը, որ վերջերս է շրջանառության դրել Իլհամ Ալիեւը, կասկածի ենթարկելու խնդիր: Քանի որ ինչ «միասնականության» մասին է խոսքը, եթե բնակչության 85 տոկոսը կամ, պաշտոնական վիճակագրության համաձայն, ավելի քան 7,5 միլիոն մարդ «Ազերտաճ» պետական ընկերության հետ հարաբերություններում նախընտրում է քաղաքացիական անհնազանդությունը:

Խոսքովանենք, որ օգտագործած ջրի դիմաց զանգվածային չվճարումները նույնպես քաղաքացիական անհնազանդություն են: Եվ այս հարցում, փաստորեն, հասարակությունը հաղթել է իշխանություններին: Հակառակ դեպքում Իլհամ Ալիեւը «բնակչության պարտքերը ներելու» հրամանագիր չէր ստորագրի:

Անշուշտ, դժվար է հավատալ, որ Ադրբեջանում բնակչության 85 տոկոսն անվճարունակ է: Անհավանական է նաեւ, որ 7,5 միլիոն մարդ պարզապես թքած ունի իշխանությունների վրա: Երեւույթի խորքում, ըստ ամենայնի, ուրվագծվում է իշխանություն- հասարակություն գործարք:

Այսինքն, մարդիկ շատ արդարացիորեն գտնում են, որ եթե իրենք զրկված են քաղաքացիական իրավունքներից, եթե չեն կարող ազատորեն արտահայտել իրենց տեսակետները, եթե ամեն հարցում իրենց փոխարեն իշխանությունն է որոշումներ կայացնում, ապա ինչո՞ւ պիտի իրենք աստծո տված ջրի դիմաց պետությանը փող վճարեն:

Եվ իշխանությունն էլ գիտի, որ այդ փողերը պահանջելու հարկ չկա: Ինչո՞ւ ավելորդ լարվածություն ստեղծել: Մանավանդ որ ընդդիմությունն էլ կարծես նման առիթ է փնտրում, որ գլխավորի հասարակության սոցիալական դժգոհությունը: Ավելի նպատակահարմար է «ներել հասարակության պարտքը», որն իրականում, սակայն, ունի «իշխանության՝ հասարակության հանդեպ ունեցած պարտքը վերադարձնելու» իմաստ:

Ամեն ինչ, այսպիսով, ընկնում է իր տեղը. իշխանությունը «վստահանում է, որ հասարակությունը չի գնա ընդդիմության հետեւից», իսկ հասարակությունը՝ գոհանում, որ իշխանության հետ գործարքը կայացել է: Այսպիսով, թերեւս «իրականություն է դառնում «իշխանության եւ ժողովրդի անսասան միասնության» մասին Իլհամ Ալիեւի կարգախոսը:

Բայց միաժամանակ էլ ակնհայտ է, որ իրավիճակի մասին Ադրբեջանի պաշտոնական քարոզչությունն իրականությանը նույնիսկ հեռավոր առնչություն չունի: Իսկ դա, ինչպես ասում են, «վերջի սկիզբն է»: Քանի որ հասարակությունը, մեկ անգամ եւ այդքան ցցուն հաղթանակ տանելով իշխանության հանդեպ, ոչ թե բավարարվելու է Իլհամ Ալիեւի «նախագահական ներողամտությամբ», այլ ամեն անգամ նոր «պարտամուրհակ» է ստորագրելու: Իսկ չվճարել իշխանությունը չի կարող: Քանի որ հակառակ դեպքում հասարակությունն ավելի արմատական հաշիվ կներկայացնի:

Մեծ հաշվով, իհարկե՝ ի՞նչ տարբերություն, թե ե՞րբ է վրա հասնելու «ճշմարտության պահը», եթե արդեն պարզ է, թե ինչպես է այն ներկայանալու: Մնացածը «տեխնիկայի խնդիր» է:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱՇԽԱՐԵԿՈՒԹՅՈՒՆ

Մինսկի մետրոյի պայթյունից հետո ապրիլի 13-ը սգո օր է երկրում

Մինսկի քաղաքային գործադիր կոմիտեի որոշմամբ ապրիլի 13-ը քաղաքում սգո օր է հայտարարված երկուշաբթի երեկոյան մետրոյի «Օկտյաբրսկայա» կայանում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ: Այդ մասին հաղորդում է Բելտա գործակալությունը:

Պայթուցիկ սարքը դրվել էր գնացքների կանգառում՝ մի նստարանի տակ: ՆԳՆ տվյալներով, սարքի հզորությունը տրոտիլային համարժեքով կազմել էր 5-7 կգ: Ռումբը լցոնված էր մոտ 1-սանտիմետրանոց մետաղյա գնդիկներով: Պայթյունից գոյացած ձագարի տրամագիծը 80 սանտիմետր է:

«КП в Беларуси» կայքը հաղորդում է, որ գլխավոր դատախազությունը պայթյունի փաստի առնչությամբ քրեական գործ է հարուցել Բելառուսի ՔՕ 289-րդ հոդվածի 3-րդ մասով («Ահաբեկչություն»): Արդեն հայտնի են ենթադրյալ երկու ահաբեկիչների մոտավոր դիմանկարները: Երեկ առավոտյան բելառուս գործընկերներին օգնելու նպատակով Մինսկ են մեկնել ՌԴ ԱԴԾ երկու քրեագետ-փորձագետներ:

Ահաբեկչությունից զոհվել է 12 մարդ: 157 վիրավորներից 26-ի վիճակը անչափ ծանր է, 67-ի վիճակը բավարար է, 58-ինը՝ միջին բարդության: Վիրավորների մեջ կան նաեւ օտարերկրացիներ, մասնավորապես ՌԴ՝ 3, ՀՀ՝ 1 քաղաքացիներ:

Մինսկում արդեն շշուկներ են պտտվում, թե ահաբեկչության գլխավոր կազմակերպչի լուսանկարը կախված է Բելառուսի պաշտոնյաների աշխատասենյակում: Այդ մասին հաղորդում է գերմանական «Շպիգել» հանդեսը, վկայակոչելով ինտերնետային կայքերի անանուն հեղինակների: «Ահավոր է նման կասկածը, սակայն ընդդիմության շրջանակներում ասում են, թե ահաբեկչությունը կարող էին կազմակերպել հենց Լուկաշենկոն կամ հատուկ ծառայություններում գործող նրա մերձավորները, որպեսզի մարդկանց ուշադրությունը շեղեն երկրի ներքաղաքական խնդիրներից», գրում է «Շպիգելը»:

Ըստ Հ1 հեռուստաընկերության «Հայլուր» ծրագրի, պայթյունից տուժած վիրավորների մեջ կա երկու հայ՝ Սամվել Սահակյանը եւ Մարգարիտ Սմբատյանը:

Ընդդիմադիրների զանգվածային ձերբակալություններ Սիրիայում

Վերջին օրերին Սիրիայի անվտանգության ուժերը իրականացնում են արեւմտամետ մտավորականների եւ ընդդիմության ակտիվիստների զանգվածային ձերբակալություններ: Ձերբակալվածների մեջ կան լրագրողներ եւ ինտերնետային հայտնի կայքերի հեղինակներ, նշում է BBC-ն: Սիրիացի իրավապաշտպանները հաստատում են 117 անձանց ձերբակալության փաստը եւ վստահ են, որ կալանավորների թիվն իրականում ավելի մեծ է:

Մայրաքաղաք Դամասկոսի ուսանողական ավանի տարածքում երկուշաբթի օրը ցույցի գրման ժամանակ սպանվել է մեկ ուսանող: Նա Դամասկոսում սպանված առաջին ընդդիմադիրն է: Վերջին երեք շաբաթվա ընթացքում ավելի քան 200 անձ է սպանվել: Ըստ մարդասիրական իրավունքների պաշտպանության սիրիական կենտրոնի տվյալների, զոհերի թվում 15-ը զինվորական է: Ըստ նույն աղբյուրի, ավելի քան 1500 անձ է անհետ կորել: Ըստ Սիրիայի մարդու իրավունքների ազգային կազմակերպության, ավելի քան 10 000 անձ է ձերբակալվել:

Ինչպես հաղորդում է «Ռոսբալտ» գործակալությունը, Սիրիայի ազգային անվտանգության ուժերը ներգրավված են Դամասկոսի, Հոմսի, Դարայի, Ալեպոյի, Դեյր Զորի, Ալ Ղամիշլիի, Ալ Ղարիբի, Ալ Ղաբի, Ալ Ղուտայի, Ալ Ղարբիի, Ալ Ղանիի, Ալ Ղանդուրայի, Ալ Ղանդուրի, Ալ Ղանդուրի, Ալ Ղանդուր

«Շչելկունչիկ» բալետը նոր մեկնաբանությամբ

Հայտնի գեղանկարիչ, երգիծաբան, բեմադրիչ Սուֆիաս Թորոսյանի (SOSO) ստեղծագործությունները մշտապես հիացրել են: Արվեստագետի մտահորիզոնի թռիչքը նկատվում է յուրաքանչյուր ստեղծագործության մեջ՝ լինի դա երգիծանկար, գեղանկար, բեմադրություն, թե պարզապես գծանկար: **«Ազգը»** զրուցեց Սուֆիաս Թորոսյանի հետ ու ցանկացավ տեղեկանալ, թե ե՞րբ եւ ինչպե՞ս ծնվեց բեմադրիչ դառնալու գաղափարը: «Ես կարծես թե նկարչության հետ զուգահեռ ստեղծագործել եմ ու բեմադրել դեռ դպրոցական հասակում: Հիշում եմ, թե ինչպես դպրոցում փոքր բեմադրություններ էի անում ու հաջողության արժանանում: Այնուհետեւ «Ոզնիների» թատրոնը ստեղծեցի: Իսկ **«Ազգ»** օրաթերթին կից «Գավիթ» թատրոն-ստուդիայի հաջողություններն այնքան ակնհայտ էին, որ այն գործեց 3 տարի: Սակայն փակվեց, քանի որ դերասանները հեռացան Հայաստանից: Իհարկե, դրանից հետո էլի եղան փորձարկումներ, նոր տենդենց՝ հնարավորին չափ աշխատել իմպրովիզացիայի վրա: Իմ քսան տարիների փորձը տանում է դեպի այդ ուղղությունը: Ես կարծում եմ, ամենահզոր արվեստը ստեղծվում է հենց իմպրովիզացիայի ժամանակ: Դա նորություն չէ, դա միշտ եղել է դարեր ի վեր, վկան՝ աշուղական արվեստում մեջլիսներն են: Դրա վառ օրինակը 1995-ին «Գոյա» ներկայացումն էր, որին **«Ազգ»** օրաթերթը հրաշալի մեկնաբանությամբ անդրադարձավ, ու մամուլի արձագանքներն ինձ ոգեշնչեցին, որ ես շարունակեմ բեմադրել»:

Մոցարտի «Ռեքվիեմը» Սուֆիաս Թորոսյանին նոր ճանաչում բերեց եւ շուտով Լիբանանի ԹՄՄ-ի հրավերով կայացան բեմադրության հյուրախաղերը: Վ. Սարոյանի եւ կոմպոզիտոր Էդ. Սադոյանի երաժշտությամբ գրված միակ օպերան Սուֆիաս Թորոսյանը բեմադրեց «Հե՞յ, ո՞վ կա այդտեղ» գործը: Նորույթ էր նաեւ Թորոսյանի աշխատանքը Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, ստեղծվեց Պուչինիի «Մադամ Բաթերֆլայ» կիսաօպերային-համերգային բեմադրությունը, որին հաջորդեցին Լեոն Կավալոյի «Պայացներ», Վերդիի «Ռիգոլետտո» եւ «Մադամ Բաթերֆլայ» օպերաների բեմադրումը Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում:

Անցած տարի Սուֆիաս Թորոսյանը երգիծաբան Սամվել Բաղդասարյանի հետ համատեղ բեմադրեց «Ականջդ կանչի՛, Մա՛յր Հայաստան» հումորային ներկայացումը, որը 2010-ին արժանացավ ԹՄՄ-ի տարվա լավագույն բեմադրություն մրցանակին:

Եվ ահա օրերս հայ հանդիսատեսի դատին հանձնվեց Սուֆիաս Թորոսյանի նոր մտահղացումը. Չայկովսկու «Շչելկունչիկ» (Մարդուկ-Ձարդուկ) գրական գեղարվեստական կոմպոզիցիան՝ «Շչելկունչիկ» բալետը: Մեզ քաջ հայտնի այդ գործը ՀՊՖՆ գեղեկ եւ գլխ. դիրիժոր Էդուարդ Թոփչյանի հետ համատեղ ձեռնարկած նոր մոդելյանը, իր մատուցման ձեւով եւ մտածելակերպով դարձավ եզակի: Հանդիսատեսը ակնկալում էր դասական բալետային ներկայացում դիտել, մինչդեռ ներկա գտնվեց անսովոր ու նորովի լուծումներով մի ստեղծագործության՝ 10x15 մետր էկրանի վրա հայտնվող ծիածանի գույներին, որոնք ռիթմիկ ու պլաստիկ բալետային շարժումների ձեւ ընդունած գալարվում էին ու խառնվում ձյան փաթիլներին՝ ստեղծելով հեքիաթային մի միջավայր: Բալետի սյուժետային կերպարները Սուֆիաս Թորոսյանի հեղինակած գրաֆիկական գործերն էին, որոնք մեկը-մյուսին հաջորդելով՝ փոխանցում էին կերպարների զարգացումն ամբողջական մեկ խոշոր գնդի մեջ, որը, կարծես, նման էր երկրագնդին, ու մանուկներին հիշեցնում էր տոնածառի գեղեցիկ մի խաղալիքի պատկեր:

Բալետի մի շարք կատարումները որքան էլ որ հայտնի նվագախմբեր էին կատարել, սակայն մասնավորապես Թոփչյանը գեղադասել էր իր նվագախմբի հետ մեկնաբանած երաժշտական գործը, որն էլ թե՛ դիրիժորին եւ թե՛ բեմադրիչ Սուֆիաս Թորոսյանին բերեց փայլուն հաղթանակ ու հաջողություն: Հանդիսատեսը հմայված ու հիացած էր հեռանում լեփ-լեցուն դահլիճից. հիշողության մեջ տպավորվել էր նմանօրինակ բալետային գործի մեկնաբանությունը, որն արժանացավ երկարատեւ ծափերի:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքը ամփոփում է գիտական արդյունքները

Ապրիլի 14-ին ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի 2010 թ. գիտական գործունեության արդյունքները կամփոփի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը:

Բաժանմունքն իր կազմում ընդգրկում է էկոլոգանոոսֆերային հետազոտությունների ինստիտուտը, Կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, Միկրոբիոլոգիայի եւ մանրէների ավանդադրման գիտատեխնոլոգիական կենտրոնը, Հայ կենսատեխնոլոգիա գիտաարտադրական կենտրոնը, Բուսաբանության ինստիտուտը, Հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, Կենսաքիմիայի ինստիտուտը:

Բաժանմունքում հաստատվել է 2011-2015 թթ. հիմնարար, կարեւորագույն եւ կիրառական հետազոտությունների ծրագիրը: Ծրագրում ընդգրկված են հետեւյալ գիտական ուղղությունները՝ կենսաբանություն, էկոլոգիա եւ բնապահպանություն, կենսատեխնոլոգիա, բժշկագիտություն:

Պատրաստվել եւ EBSCO միջազգային հրատարակչության ինտերնետային էջում զետեղվել են բաժանմունքի «Բնական գիտությունների էլեկտրոնային հանդես»-ի 14-15-րդ համարները: Լույս են տեսել «Հայաստանի բժշկագիտություն», «Կենսաբանական» եւ «Նեյրոքիմիա» գիտական հանդեսները:

Բաժանմունքի գործունեությունում կարեւոր տեղ են գրավել միջազգային գիտական կապերի ընդլայնման եւ ամրապնդման հարցերը:

Քննարկվել են Բելառուսի ԳԱԱ եւ ՀՀ ԳԱԱ միջեւ ներդրումային նախագծերի շրջանակներում համագործակցության համար առաջարկվող ծրագրերը: Շարունակվել է բաժանմունքի կազմակերպությունների համագործակցությունը Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ:

Գիտնականներն ակտիվորեն մասնակցել են «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի, «Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի, «Սեւանա լճի էկոհամակարգերի վերականգնման եւ օգտագործման 2010թ. ծրագրերի միջոցառումների կատարման ընթացք»-ի քննարկմանը:

Բաժանմունքի կազմակերպություններն ընդգրկված են տարբեր դրամաշնորհային ծրագրերում, որոնց աջակցում են ISTC-ն, IPP-ITSI-ն, DAAD-ը, ԵԱՀԿ-ի երեւանյան գրասենյակը, Գիտության եվրոպական հիմնադրամը, CRDF-ը, NATO-ն, ANSEF-ը եւ այլ դոնոր կազմակերպություններ:

ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքն ունի 855 աշխատակից, այդ թվում 4 ակադեմիկոս, 5 թղթակից անդամ, 75 գիտության դոկտոր եւ 258 գիտության թեկնածու:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն
12.04.2011թ.

Զոն Լենոնի նամակների հավաքածուն՝ շուտով

Լեգենդար երաժիշտ Զոն Լենոնի նամակների հավաքածուն, որը կրում է «Անկեղծ՝ ձեր Զոն» խորագիրը, լույս կտեսնի հաջորդ տարի: Ժողովածուի տպագրման աշխատանքներով կզբաղվի «Բիթլզի» պատշտոնական կենսագիր Հանթեր Դեյվիսը: Նամակները կտպագրվեն ժամանակագրական կարգով եւ դրանց վրա կզետեղվեն Լենոնի նկարներն ու ձեռագրերը: Լենոնի այրին՝ Յոկո Օնոն ամուսնու մահից ավելի քան 30 տարի հետո թույլատրել է առաջին անգամ տպագրել իր ու ամուսնու անձնական նամակագրությունը, տեղեկացնում է «Guardan» թերթը:

Վերջին շրջանում Լենոնի նամակները հաճախ էին հայտնվում աճուրդներում: 2003-ին աճուրդներից մեկում Լենոնի մի նամակը՝ ուղղված Syracuse Post-Standard թերթի արվեստի քննադատին, որտեղ Լենոնը գրել էր, թե «հասարակությունը սիրում է միայն մեռած նկարիչներին, բայց ես ու Յոկոն դժվար թե նրանց ընդառաջենք այդ հարցում...», վաճառվել է 38 հազար դոլարով:

Մ. Մ.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Գլենդեյլցի տասնամյա Ալբերտ Բալյանը «Տեխիաթների աշխարհում» մրցույթ-փառատոնի հաղթող

Պատանի նկարիչ Ալբերտ Բալյանն արդեն չորրորդ տարին է, ինչ սովորում է Գլենդեյլի Աթանյան արվեստի կենտրոնի նկարչության եւ արվեստի դպրոցում: Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության եւ Գեղագիտության ազգային կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպված «Տեխիաթների աշխարհում» մանկական նկարի համահայկական մրցույթը հայտարարվել էր անցյալ տարվա գարնանը, որի շրջանակներում կենտրոնի աշակերտների ստեղծագործություններից ընտրվեցին 13 աշակերտների գործեր, որոնց թվում էր նաեւ Ալբերտի «Մի կաթիլ մեղր» հեքիաթի նկարազարդումը: Փառատոնի եզրափակիչ ցուցահանդեսը տեղի ունեցավ սեպտեմբերին Երեւանում: Մրցույթ-փառատոնին մասնակցում էին Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, ինչպես նաեւ 26 երկրների՝ Ռուսաստան, ԱՄՆ, Շվեյցարիա, Եգիպտոս, Քուվեյթ եւ այլ երկրների հայ մանուկներ;

Մրցույթին Աթանյան արվեստի կենտրոնի սաները մոտեցան լրջորեն եւ մեծ աշխատանք կատարեցին իրենց նկարած հեքիաթների ձեւավորման յուրովի եւ իմաստալի լուծումներ գտնելու համար: Ալբերտի «Մի կաթիլ մեղրը» դրանցից լավագույնների մեջ էր: Մրցույթ-փառատոնի երկրորդ փուլի ավարտից հետո պարզ դարձավ, որ Աթանյան արվեստի կենտրոնի սաներ Մոնիկա Համբարձումյանի եւ Դավիթ Պիրիջանյանի նկարներն արժանացել են խրախուսական մրցանակի, իսկ Ալբերտ Բալյանը դարձել է մրցույթի հաղթող:

Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության հրավերով մարտի 21-26-ը Ալբերտը գտնվում էր Հայաստանում՝ մասնակցելու հաղթողների համար կազմակերպված հետաքրքիր ու բազմաբովանդակ միջոցառումներին, ինչպես նաեւ պարգեւների հանձնման արարողությանը:

Այս տարի ապրիլի 20-ին Երեւանում «Գեղագիտության ազգային կենտրոնում» կբացվի Աթանյան արվեստ-26 կենտրոնի 96 սաների նկարների ցուցահանդեսը «Ես սիրում եմ Հայաստանը» խորագրով: Սա Գլենդեյլի Աթանյան արվեստի կենտրոնի եւ Երեւանի «Գեղագիտության ազգային կենտրոնի» համատեղ նախագիծն է, որին պատրաստվում էին 2010 թ. սեպտեմբերից: Նույն ցուցահանդեսը կբացվի ամռանը Լոս Անջելեսում: Այս առիթով Աթանյան արվեստի կենտրոնը հրատարակել է գունազարդ ալբոմ, որի մեջ զետեղված են բոլոր մասնակիցների ստեղծագործությունները:

Այս տարի նույնպես Աթանյան արվեստի կենտրոնի աշակերտները տարբեր մրցույթներում արձանագրեցին նոր հաջողություններ, արժանացան բարձրագույն պարգեւների: Դրանց թվում է Ստեֆանի Գրիգորյանի կոմպոզիցիան, որը հայրուրավոր պատանեկան ստեղծագործություններից ընտրվել եւ տեղադրվել է բազմահազար տպաքանակ ունեցող «Sax Art» կատալոգի շապիկին: Ստեֆանիի «Ես սիրում եմ կապիկներին» աշխատանքը նախապես արժանացել էր «Sacura of America» յուղակավճարների մրցույթի մրցանակին, որից հետո «Sax Art»-ը ընտրել էր այդ գործն իր կատալոգի շապիկին տեղադրելու համար:

Գլենդեյլի քաղաքապետարանի Արվեստի եւ մշակույթի բաժնի «Մաքուր պահենք Գլենդեյլը» տարեկան մրցույթի 2011 թ. եզրափակիչի մասնակիցներ դարձան կենտրոնի սաներ Առնելլա Քալանթարյանը եւ Տանիա Ռոստամին, իսկ Աթանյան արվեստի կենտրոնն արժանացավ հատուկ մրցանակի:

Փետրվարի 5-ից մարտի 20-ը Աթանյան արվեստի կենտրոնի աշակերտներ Արփի Կիրկորյանի, Ալիսա Մանուկյանի, Լուսին Եղգիբարյանի, Նինել Աբրահամյանի, Անի Կիրվանյանի, Սարահ Ալաջաջյանի եւ Ստեֆանի Գրիգորյանի ստեղծագործությունները ցուցադրվեցին Օկլանդի «Մանկական արվեստի թանգարանում» («Museum of Childrens Art»): Այս գործերն ընտրվել էին եզրափակիչի 150 մասնակիցների մեջ պատանեկան նկարչական մրցույթին մասնակցած չորս հազարից ավելի ստեղծագործություններից Ամերիկայից եւ Կանադայից:

Աթանյան արվեստի կենտրոնը վստահորեն պահպանում է առաջատարի դերը մանկապատանեկան արվեստի ուսուցման, զարգացման եւ պրոպագանդման գործում՝ հետեւողականորեն եւ նվիրումով կյանքի կոչելով իր առաքելությունը:

ԿԱՐԻՆԵ ԱՓՐԻԿՅԱՆ
Գլենդեյլ

«Եվրոպական դաշնամուր» միջազգային մրցույթին կմասնակցեն երկու հայուհիներ

ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում անցկացվեցին Եվրոմիության կողմից Հայաստանում իրականացվող «Եվրոպական դաշնամուր» ծրագրի երկրորդ փուլի աշխատանքները, որ նախատեսում էր վարպետության դասեր, ու նաեւ Ֆրանսիայի Կաննն քաղաքում հոկտեմբերի 15-30-ը (2011 թ.) անցկացվելիք դաշնակահարների միջազգային մրցույթի մասնակիցների ընտրություն: Մի քանի տասնյակ դաշնակահարներից «Եվրոպական դաշնամուր» ծրագրի համակարգող՝ դաշնակահարուհի Դանիել Լավալի ընտրությամբ Հայաստանի միջազգային այդ հեղինակավոր մրցույթին կմասնակցեն Իզաբելլա Մարությանը (դաս.՝ պրոֆ. Ս. Սարաջյան) եւ Սուսաննա Իսրայելյանը (դաս.՝ պրոֆ. Ս. Բարսեղյան):

Մ. Մ.

Էլեն Գրիգորյանը Եվրոպայի փոխչեմպիոնուհի

Կազանում ընթացող Եվրոպայի առաջնությունում Հայաստանի պատվիրակներից երեկ մրցահարթակ դուրս եկավ Էլեն Գրիգորյանը՝ մասնակցելով մինչեւ 53 կգ քաշային ծանրոցուհիների մրցավեճին: Ինչպես ցույց տվեց մրցումների ընթացքը, ոսկե մեդալների համար հիմնական պայքարն ընթացավ Էլեն Գրիգորյանի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոնուհի, աշխարհի նախորդ առաջնության արծաթե մրցանակակրուհի, թուրք Այլին Դաշդելենի միջեւ: 23-ամյա հայ մարզուհին բավական լուրջ մրցակցություն ցույց տվեց 29-ամյա փորձառուԴաշդելենին, սակայն չկարողացավ նրանից խլել Եվրոպայի չեմպիոնուհու տիտղոսը: Էլեն Գրիգորյանը երկամարտի 195 կգ (85+110) արդյունքով դարձավ Եվրոպայի փոխչեմպիոնուհի, ինչը եւս մեծ նվաճում է երիտասարդ մարզուհու համար:

Էլենը շատ վստահ սկսեց պոկում վարժությունը: Առաջին մոտեցմամբ նա առանց մեծ ճիգեր գործադրելու, վստահ գլխավերեւում պահեց 82 կգ-անոց ծանրաձողը: Երկրորդ մոտեցմամբ նա նույնպիսի վստահությամբ իրեն ենթարկեց 85 կգ ծանրությունը ու նվազագույնն իր համար պոկում վարժությունում ապահովեց փոքր արծաթե մեդալը, քանի որ մրցակցուհիներից ապարեզում մնացել էր միայն Էլենի գլխավոր հակառակորդը՝ Դաշդելենը: Ցավոք, 3-րդ մոտեցման ժամանակ Էլենին չհաջողվեց բարձրացնել 88 կգ-ը: Իսկ ահա Այլին Դաշդելենի 3 մոտեցումներն էլ հաջող էին ու նա 90 կգ արդյունքով արժանացավ պոկում վարժության ոսկե մեդալին: 83 կգ արդյունքով բրոնզե մեդալը բաժին հասավ գերմանուհի Յուլիա Ռոդեին, որն անձնական ավելի թեթեւ քաշի շնորհիվ մրցանակակիր դարձավ՝ առաջ անցնելով նույնպիսի արդյունք ցույց տված ուկրաինուհի Մարիա Վիդլիվանային:

Հրում վարժությունում Էլեն Գրիգորյանն ավելի վստահ հանդես եկավ՝ հաջորդաբար բարձրացնելով 103, 106 և 110 կգ: Բայց դա բավարար չէր ոսկե մեդալ նվաճելու համար: Այլին Դաշդելենն իրոք այդ օրն ուժեղագույնն էր: Նա երկամարտի 202 կգ (90+112) արդյունքով 3-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեց Եվրոպայում: Ընդ որում 3-րդ մոտեցմամբ թուրք մարզուհին փորձեց գերազանցել հրում վարժության իրեն պատկանող աշխարհի ռեկորդը, սակայն 122 կգ-անոց ծանրաձողն այս անգամ նրան չենթարկվեց: Իսկ Էլեն Գրիգորյանը արծաթե մեդալ նվաճեց ինչպես հրում վարժությունում, այնպես էլ երկամարտում: Բրոնզե մեդալը երկամարտի

187 կգ (83+104) արդյունքով նվաճեց Գերմանիայի ներկայացուցիչ Յուլիա Ռոդեն:

Այսպիսով, մրցումների 2 օրվա արդյունքներով Հայաստանի ծանրոցուհիների հաշվեկշռում արդեն կա 3 արծաթե եւ մեկ բրոնզե մեդալ, որը նախորդ օրը հրում վարժությունում նվաճել էր Սմբատ Մարգարյանը: Ի դեպ, մրցանակակիր դառնալուն Սմբատին օգնեց բուլղարացի ծանրոցոցոց

Օրվա հեռանկար

Ստեղծվեց Orange հիմնադրամը Հայաստանում

Երեւան, 12 ապրիլի, 2011թ.: Այսօր Orange-ը պաշտոնապես հայտարարեց Հայաստանում Orange հիմնադրամի ստեղծման մասին: 1987 թվականին իր հիմնադրումից ի վեր՝ Orange հիմնադրամը եղել է Orange խմբի բարեգործական եւ մարդասիրական ծրագրերն իրականացնող հիմնական կառույցը: Համարելով հաղորդակցումը հասարակության զարգացման հիմնական խթաններից մեկը՝ Orange հիմնադրամն աջակցում է այնպիսի ծրագրերի, որոնք հաղորդակցությունը դարձնում են առավել մատչելի բոլորի համար:

Orange Արմենիա հիմնադրամի մեկնարկով Հայաստանում Orange-ի կողմից իրականացվող մարդասիրական ծրագրերին եւ սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ներդրումներն ավելի ծավալուն կդառնան: Ներդրումները հիմնականում ուղղված կլինեն գյուղական համայնքների զարգացմանը, երեխաներին, ինչպես նաեւ առողջապահական, մասնավորապես հաշմանդամների խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի աջակցմանը:

«Ես հպարտ եմ, որ Orange-ը նոր մոտեցում է բերում նաեւ կորպորատիվ բարեգործության ոլորտ՝ Հայաստանում խթանելով մեծ ընկերությունների կողմից կորպորատիվ հիմնադրամներ ստեղծելու մշակույթը, որը թույլ կտա այս ոլորտը նույնպես դարձնել համակարգված, հասարակության իրական կարիքներին արձագանքող եւ թափանցիկ: Ուրախ ենք հայտարարել Հայաստանում Orange հիմնադրամի ստեղծման մասին, որով եւս մեկ անգամ հաստատում ենք մեր ցանկությունն ու պատրաստակամությունը՝ կատարել ներդրումներ՝ ուղղված սոցիալական ծրագրերի աջակցմանն ու իրականացմանը: Այժմ Orange-ը Հայաստանում իր գործունեության մի նոր փուլ է թեւակոխում, որը մեր սանձնած պարտավորության խոսուն սկիզբն է, այն է՝ նայել ավելի հեռուն, քան պարզապես բիզնեսը» ասաց Orange Արմենիա ընկերության գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

«Մեծ ուրախությամբ ողջունում ենք Հայաստանի՝ որպես 11-րդ երկրի մուտքը Orange հիմնադրամի մեծ ընտանիք: Orange հիմնադրամը շարունակում է ընդլայնել իր սահմանները՝ դրանով իսկ օգնելով մարդկանց ավելի լավ ու հեշտ հաղորդակցվել, մասնավորապես նրանց, ովքեր հաշմանդամության, ոչ լիարժեք կրթության կամ մշակույթին հասանելիություն չունենալու պատճառով մեկուսացած են շրջապատող աշխարհից: Ուրախ եմ նաեւ հայտնել, որ Հայաստանում Orange հիմնադրամի գործունեության մեկնարկին մայր հիմնադրամը հատկացրել է 100,000 եվրո՝ հաջակցություն 2011թ. իրականացվելիք ծրագրերի», ասաց Orange հիմնադրամի՝ Եվրոպայում, Միջին Արեւելքում եւ Ասիայում ներկայացուցիչ **Մարի Լիզա Դյուբքանը**:

«Orange Արմենիա հիմնադրամն իր գործունեությունը կծավալի՝ ելնելով ինչպես երկրում առկա խնդիրներից, այնպես էլ համաձայն Orange հիմնադրամի որդեգրած ռազմավարության: Հայաստանում հիմնադրամն իր գործունեության ընթացքում հիմնական շեշտը կդնի երեխաների խնդիրների, ինչպես նաեւ գյուղական համայնքների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման վրա: Մեր աշխատանքի սկզբնաղբյուրն է լինելու հիմնվել երկարաժամկետ գործընկերության վրա, ինչպես նաեւ՝ մշտապես ակնջալուր լինել հասարակության կարիքներին» հավելեց Հայաստանում Orange Արմենիա հիմնադրամի գլխավոր քարտուղար **Նազարեթ Սեֆերյանը**:

Orange հիմնադրամը համակարգում է Ֆրանս Տելեկոմ խմբի կողմից իրականացվող բարեգործական գործունեությունն ամբողջ աշխարհում՝ սերտորեն համագործակցելով խմբի շրջանակներում գործող բոլոր հիմնադրամների եւ խմբի մաս կազմող ընկերությունների հետ: Ներկայումս հիմնադրամն աջակցում է միջազգային եւ տեղական հասարակական կազմակերպությունների կողմից նախաձեռնվող ծրագրերի իրականացմանը Եվրոպայի, Ասիայի, Միջին Արեւելքի եւ Աֆրիկայի ավելի քան 30 երկրներում:

Ամբողջ աշխարհում խմբի շրջանակներում գործող հիմնադրամների շարքում Orange Արմենիա հիմնադրամը 11-րդն է: Նման հիմնադրամներ արդեն իսկ գործում են մի շարք երկրներում ինչպիսիք են Ֆրանսիան, Իսպանիան, Սենեգալը, Մալին, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Լեհաստանը, Սլովակիան, Մոլդովան եւ Դոմինիկյան Հանրապետությունը:

1000 անվճար զանգ 1-ին անգամ լիցքավորելիս

Երեւան, 12 ապրիլի, 2011թ.: Այսօր Orange-ը ներկայացրեց հատուկ առաջարկ Orange Խոսենք ծառայության այն բաժանորդների համար, ովքեր ակտիվացրել են համարը մինչեւ ապրիլի 1-ը եւ դեռ չեն հասցրել լիցքավորել այն: Մինչեւ ապրիլի 30-ը առաջին անգամ լիցքավորելով հաշիվը 500 եւ ավելի դրամով՝ վերջիններս կստանան 1000 անվճար զանգ 31 օրվա ընթացքում Orange ցանցի ներսում խոսելու համար: Ստացած անվճար զանգերները հնարավոր չի լինի օգտագործել տեսազանգ կատարելու համար, ինչպես նաեւ զանգահարելիս:

Ավելին, այս շաբաթ կրկին Orange-ի Խոսենք կանխավճարային ծառայության բաժանորդները, լիցքավորելով հաշիվը, հնարավորություն ունեն ստանալու նվեր՝ 100 հեռախոսներից մեկը:

ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը ապրիլի 12-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, հաստատեց «ՀՀ ԿԲ կողմից գրանցում ստացած կազմակերպությունների պետական գրանցման մասին տեղեկությունները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին տրամադրելու կարգը»: Փոփոխություններ կատարվեցին «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում եւ «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում:

Խորհուրդը գրանցեց «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կանոնները եւ հաստատեց 2010թ. տարեկան «Վիճակագրական տեղեկագիրը»:

Խորհրդի որոշմամբ վերաձեւակերպվեց «Ոսկե շղթա» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման լիցենզիան: «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՍՊԸ-ին նոր դասերով լիցենզիա, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ «Վարկի ապահովագրություն» դասով լիցենզիա եւ «Գարանտ-Լիզինգ» ԱՓԲԸ-ին «Օդանավերի ապահովագրություն» եւ «Օդանավերի (նաեւ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն» դասերով լիցենզիաներ տրամադրվեցին:

Խորհուրդը լուծարման թույլտվություն տվեց «ԳՐԻԱՐ-ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ-ին եւ ընկերության լիցենզիան ուժը կորցրած ճանաչեց: «Ալֆա Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ն եւս լուծարման թույլտվություն ստացավ, իսկ ընկերության թիվ 0050 ԱՊՈ «Ոչ կյանքի ապահովագրության իրականացման» լիցենզիան ուժը կորցրած ճանաչվեց: Օրենսդրության խախտումների պատճառով ուժը կորցրած (գործունեությունը դադարեցված) ճանաչվեց «ՊԱԲ» ՍՊԸ գրավատան գրավատնային գործունեության թիվ ԳԳ-Ե185 լիցենզիան:

Թեֆեյան մշակութային միության ամենամյա մրցանակաբաշխություն

«Վահան Թեֆեյան» ամենամյա մրցանակաբաշխման հանդիսավոր արարողությունը տեղի կունենա 2011 թ. ապրիլի 18-ին, երկուշաբթի օրը, ժամը 15.00-ին, Թեֆեյան կենտրոնի (Խանջյան 50) մեծ դահլիճում:

Գրականության, երաժշտության, նկարչության, թատրոնի, քաղաքական երգիծանքի, հեռուստատեսության, մանկական ծրագրերի եւ «**Ազգ**» օրաթերթի հրապարակումների համար տրվող մրցանակների հանձնման արարողությանը կուղեկցի գեղարվեստական ծրագիր:

ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հայաստանի Թեֆեյան մշակութային միությունը տեղեկացնում է, որ ապրիլի 16-ին ժամը 13-00-ին Թեֆեյան Կենտրոնի ցուցասրահում տեղի կունենա «Վահան Թեֆեյան» ամենամյա մրցանակաբաշխության ցուցահանդես մրցույթը (գեղանկար, քանդակ) անվանակարգերում:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի և ՀՀ կառավարության 07.03.03թ N 217-Ն և N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Երևան քաղաքի Շենգավիթ համայնքում հողի սեփականատեր Համլետ Թաշչյանի ոռոգման նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 3.54 լ/վրկ անհրաժեշտ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17:00-18:00-ն դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարության 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011թ. ապրիլի 19-ին, ժամը 16:00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղադրեք եւ ընթերցեք անվճար հայտարարություններ www.webstand.am կայքում

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2010թ. դեկ. 31-ի դրությամբ	2009թ. դեկ. 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ակտիվներ արտարժույթով		
Դրամական միջոցներ	7,552,047	7,776,292
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	158,102,101	221,678,070
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	404,632,917	459,234,675
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	917	917
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	95,678,521	25,171,087
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	63,670,237	101,621,324
Այլ ակտիվներ	874,492	666,956
	730,511,232	816,149,321
Ակտիվներ տեղական արժույթով		
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	70,615,499	70,735,139
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	88,705,765	121,204,193
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	4,132,916	3,862,867
Հիմնական միջոցներ	26,312,189	15,762,787
Ոչ նյութական ակտիվներ	583,179	427,907
Այլ ակտիվներ	3,752,261	2,451,325
	194,101,809	214,444,218
ԸՆԴԱՄԵՆը ակտիվներ	924,613,041	1,030,593,539
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Պարտավորություններ արտարժույթով		
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	99,650,034	150,616,174
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	3,969,112	1,329,188
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	19,478	36,588
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	82,284,509	92,263,527
Այլ փոխառություններ	27,599,809	28,309,397
Այլ պարտավորություններ	146,096	206,504
	213,689,038	275,761,378
Պարտավորություններ տեղական արժույթով		
Թողարկված պարտատոմսեր և մետաղադրամներ շրջանառության մեջ	348,164,734	320,669,631
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	80,825,771	53,204,221
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	106,545,573	177,194,796
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	195,802,721	172,556,583
Այլ պարտավորություններ	1,353,894	853,302
	732,692,693	724,478,533
Ընդամենը պարտավորություններ	946,381,731	1,000,239,911
Սեփական կապիտալ		
Թողարկված կապիտալ	100,000	100,000
Գլխավոր պահուստ	17,389,049	11,392,622
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	85,663,194	85,663,194
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	(1,628,760)	(1,414,100)
Կուտակված վնաս	(123,292,173)	(65,386,088)
Ընդամենը սեփական կապիտալ	(21,768,690)	30,353,628
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	924,613,041	1,030,593,539

Արթուր Ջավադյան
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ

Հայկանուշ Հակոբյան
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գլխավոր հաշվապահ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունը իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, սորագրուած է տպագրութեան՝ 12.4.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: